

Hentchak :

ORGANE DU PARTI

RÉV. ARMÉNIEN

HENTCHAKISTE.

ՀԱՅԵՐԵՐ

ADRESSE

M. BELLART,

85, Peckham Rye

LONDON, S.E.

Angleterre.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՆԱԶԸՄԱԿԱՆՆԵՐԻ ՆՈՐ ՈՋԻՐՆԵՐԸ

Նազըմա-Աբխարը գաւաղի խմբակի կողմից ըստ պանութեան փորձ է կատարել Յուլիս 7-ին Կուս. Ըմբերիայի ներկայացուցիչ պ. Ս. Գլխեանի եւ Հովա. 19-ին Ը. Էյցարիայում Կուս. Հիմնադիրներից պ. Ե. Նազարբեկի վրայ, իսկ Հովա. 26-ին նախկին Կենտ. Ս. Զարչ. անգամ պ. Սաղունու եւ Կոյ. 4-ին Ռուսաստանի պատգամաւորներից պ. Զամբի եւ Ռադրի, որոնց վերջին երեքը իրենց ծագելի հասկում զոհ գնացին դաւաճանների գնդակին: Սանրամասնութիւնները յաջորդով:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ՅԵՂ. ՀՆՁ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Դ. ԸՆԴՀ. ՊԱՏԳ. ԺՈՂՈՎԻ

Աշխարհիս երեք ամենապատու երկրները ցօղեցան հայի արիւնով:

Հպարտ Անգլիան, արի Ը. Էյցարիան եւ ազատ Ըմբերիան զայրոյթով տեսան, թէ ինչպէս իրանց հիւրընկալ հողը դարձաւ թափու հակամարդկային ոճրագործութիւնների:

ՍԻ վերաւոր Ըմբերիայում, միւսը Ը. Էյցարիայում եւ երեք զիսկ Անգլիայում, բոլորն էլ իրանց ազգի պատուութեան նւիրած անձեր, հինգն էլ հայ — ահա այդ ոճիրների արդիւնքը:

Եւ դրանք կատարող ձեռքերը եղել են Հայի ձեռքեր:

Սարգսապանութիւն, եղբայրասպանութիւն, ազգապաւ ոճրագործութիւն:

Չափ չունի մեր զայրոյթը, զայրոյթ յանուն հայութեան, յանուն Ազատութեան, յանուն ընդհանուր թշնամու դէմ մղած ազատարար Գործի: Ենթերջ կը լինի մեր բողոքը, բողոք ի բողոք սրտէ եւ դէպի հաւաքաւ ժողովուրդը ու նրա փրկութիւնը տաճած մեր սիրոյ ամբողջ ոյժերով:

Յանուն Հայութեան եւ նրա Ս. Գործի մենք դատաւարանով դատաւարտում ենք անգգամ ոճրագործների արինարբու արարքը, որ գիտակցա-

ւոր թէ անգիտակցաբար յայտնում է հակազդային ու մարդասպան գործակցութիւն մեր դուրսը ոխերիմ թշնամի Սեծ Սարգսապան Սուրբիան Համբի կառավարութեան:

Հնչակեան Կուսակցութիւնը, որի նպատակն է եղել գործել եւ գործում է իր ազգի, իր ժողովրդի ազատութեան համար ա մ ե ն բռնակալ լրծից եւ որ միշտ եղել է եւ է ներկայումս էլ դատաւարանող բոլոր եղբայրասպան գործողութիւնների, դիմում է բաղադրակրթ մարդկութեան առաջ եւ յանձնում նրա արդար զայրոյթին ու դատաւարանութեան այդ Հայ ոճրագործների խմբակին, որ բողոքում է յեղափոխական անւան տակ, առաջ մղելու իսկապէս մէկ ազգակործան, հակամարդկային ու յանցաւարտ ընթացք:

Այսուհետեւ այդ ոճրագործների եւ նրանց ձեռքը ուղղող հեղինակների անուններն աւելի եւս ենթարկւած են անէծքի եւ արձանագրւած պատմութեան ա մ օ թ ո յ ս իւնի վրայ ընդհանուր քաղաքակիրթ մարդկութեան կողմից:

Հնչակեան Կուսակցութիւնը յ ե ղ ա փ ո խ ա կ ա ն կուսակցութիւն է, եւ յանուն յեղափոխութեան եւ յեղափոխական գործունէութեան յայտարարում է, որ իրան յեղափոխական ներկայացնող Աբխարիսա խմբակը ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ խմբակ ոճրագործների, որոնք հազաւ են յեղափոխականի դիմակ աւելի դիւրութեամբ առաջ տանելու համար իրանց ազգապաւ գործողութիւնները:

Անիծեալ Հայ ձեռքեր գաղաւթողի հարւած աւելն Հայութեան լաւ զաւակներից մի բանիսնւրին եւ դրանով իրանք իրանց դուրս հանեցին Հայութեան ծոցից. — նրանք իրանց դուրս հանեցին մարդկութեան ծոցից:

Չը մոռանալով մեր թանկագին զոհերը, մենք, ի դիմաց Հնչ. Կուսակցութեան, յայտարարում ենք, որ մեր ջանքը, մեր մտքի եւ մեր սրտի ամբողջ ոյժը, որպէս եւ մեր արիւնը մենք պատրաստ ենք այժմ, ինչպէս եղել ենք միշտ՝ նւիրել Հայ ազգի ազատութեան Գործին, հակառակ թիւրք կառավարութեան եւ նրա դիմակաւոր ու անդիմակ, զիտակ ու անգիտակ արքանեակների ամեն ստորաքարը, ոճրագործ եւ արիւնխաղում գործողութիւններին:

Մենք զիմուքն ենք անուամբ քաղաքակիրթ մարդկութեան՝ յայտարարելով, որ նրա մարդկային բարոյական պարտականութիւնն է, որպէս և խաղաղութեան պահանջը՝ լինել համակիր մի ղեկավար ժողովրդի վերջին ծիգերին՝ ազատելու արեւելեան Մեծ Վաղանի ծիրաններից։

Մենք զիմուքն ենք անուամբ ընդհանուր Հայութեան՝ չընկճել ուժազորների ազդակործան դուրսդուրումների առաջ և աւելի եռանդով, աւելի ոյժով առաջ խաղաղ դէպքի Ս. Վործի ասպարէզը՝ տապալելու համար այն ստրկական վիճակը, որ ստեղծում է նոյն իսկ Հայերի մէջ նորատիպ Վլասակներ և եղբայրասպան հրէշներ։

ՀԱՅԻ ԱՐԻՒՆԸ

Վաղցր է, այո՛, շատ քաղցր հայի արիւնը...
Հատերն են նրան ծարաւի...

Հայկական պատմութեան էջերում պակաս չեն այդ արեան գնահատողները։ Նրանք բանական շարժեցին, նրանք չսխալեցին մեծաքանակ ծախսեր այդ արիւնը առատութեամբ հոսեցնելու համար։ Սակայն նրանցից և՛ ոչ մէկը չէ կարող մրցել այն աշխարհահռչակ արիւնարբու հրէշի հետ, որ 19 և 20-րդ դարերի մէջ բազմաժամ Խօսքօրի ակերում, իւր արիւնների գահի վրայ, լայն բերանը դեռ չէ փակել և դարձեալ ազահաբար ծծել է կամենում հաւի զգլխից արիւնը։

Հայի եւ հային վիճակակից փոքրիկ ազգերի սրտից ծորող այդ արիւնը մինչ այն աստիճան է զրգռել Մեծ Օտերունու նշաւակած Մեծ Սարգսպանի ախորժակը, որ նա տարիներ առաջ գոհաբերել չը ինայելով իւր Ֆինանսական, տնտեսական և քաղաքական ուժերը՝ բուրտ, չէրքէզ, ալբանացի և այլ մոլեռանդ ցեղերի ու մանաւանդ հաւատարիմ համըղիների սրբով բանալ տեղ 300,000 հայ անմեղների երակը և նրանց կենսական հեղուկով ոչ թէ միայն ինքը ժամանակակից աւուրած ազգաց, այլ և իւր «գեղասէր» աչքի տեսողութեան առաջ կարմրանքի սալայատակների, լեռների, ձորերի և դաշտերի բնատմանի տեսարանը պատրաստեց՝ իւր խախուռ գահի ոտների տակից — Պօլսից սկսած մինչև Շատախի բարձրութիւնը մի կողմից և մինչև անյաղթելի Օւլթիւնը միւս կողմից — մի ահագին տարածութիւն, որի վրայ հարիւր հազարաւոր հայ կրտսերների, ծերերի, հայ ամօթխած կանանց, կոյսերի և — որ սարսափելին է — հայ անմեղ մանուկների մարմնամասերն են խառնիխուռն ցրւած, տարածւած...

Ինչպէս երէկ, նոյնպէս և՛ այսօր նայում է մարդկութեան և մարդկային քաղաքակրթութեան նախատինքը կազմող Սուլթան-Վահապետը իւր յատուկ ջանքերով պատրաստւած սոսկալի տեսարանի վրայ, հրձոււմ անթիւ փրատակների և հրքածութիւնների կոյտերով, և նրա նայածքը ուրբան խոժոռ, ուրբան զիւային է, բայց և այնպէս նախկին սարսափը, զոգը չի ազդում և չի էլ կարող ազդել դէմ առ դէմ կանգնած կորաքամակ, բայց աչքերը սուրբ վրէժխնդրութեամբ լի հայութեան

Պղնձնած իշխողի և վրէժխնդիր հպատակի աչքերը հակազդեցութիւն են դրժում միմեանց վրայ, իսկ այս վճռական րօպէի հանդիսատես եւրօպական վեց պետութիւններից միայն հինգն են երէկայ զիրքը շարունակում — յանուն ազգային շահերի լուռ մնում՝ կամ իրանց բարեկամ սուլթան Համիդի գահի ետեւում թաղնւած՝ գաղտնի կերպով նրա ականջին փսփսում՝ «արա՛, ինչ կամենում ես, բայց հայ արեան արժէքի գոնէ մի հազարերորդականը մեզ շնորհիւ բոլորապէս Վահայն այլ ևս այսքանով չի բաւականանում վեցից մէկը — ռուսական դիշատիչ Արծիւը։

Թէ հարազատ ազգի և թէ հպատակ այլ ազգերի բանւոր դասակարգի սակաւթիւ անդրանիկ նահատակների թափած արիւնը նրա ախորժակն էլ է զրգռել և նա ներկայում գտնում է, որ ռուսական շահերի տեսակէտից չափազանց հաճելի է սեղանակից լինել այն նոր բարեկամին, որին երէկ Արդրումի և Վարսի բարձրութիւնների վրայ հիւրասիրում էր թնդանօթների, հրացանների զնդակներով և մերկացրած սրերով։ Բացւած ախորժակը արիւն է պահանջում և սուլթան Վիկտորն պակաս գնահատող չի արիւններից ամենահամեղի... Մի կողմից հայ արեան քաղցրութիւնը, իսկ միւս կողմից հայութեան առատաբուրդ երակի բացումը իրաւունք են տալիս «արեւելեան ազգերի պաշտպանին» մօտենալ երէկայ «անհաւատ» թրշնամուն, նրա հետ սրտագին բարեկամութիւն հաստատել և խղճի ամենայն հանգստութեամբ ծծել քաղցրիկ հիւթը՝ չը մոռանալով սոսկայն նրա շիթերը ցայտեցնել երբեմն ազատ Աովկասի մեծ քաղաքների — Թիֆլիսի, Բաքւի մայրերի վրայ...

Հայ արեան քաղցրութեան պատճառը նրա «մեղքի և յանցանքի» մէջ են գտնում արիւնախումբները։ — Հայը մեղաւոր է և յանցաւոր, որովհետեւ նա բնութիւնից օժտւած լինելով առաջադիմական յատկութիւններով՝ կուլտուրական ազգերի շարքն է կամենում մտնել, որովհետեւ նա ձգտում է ամեն ատեն և ամեն կէտով զարգացման. հայը մեղաւոր է և յանցաւոր, որովհետեւ նա դարերի ստրկութեան

անտանելի լուծն է կամենում իւր ուսերից թօթափել և ապրել իբրև մարդ՝ մարդկային ամեն տեսակ բնական և օրէնադրական իրաւունքներով, և ոչ թէ՛ մի անասուն, մի կթան կով, որի ծծերից են կախած օսմանցին, ռուսը և մինչև անգամ աւաղակարարոյ քիւրտն ու չերքէզը. հայը մեղաւոր է և յանցաւոր, որովհետև նա իւր աղգայնական, բնատնական և անհատական պատիւն է պաշտպանում պաշտօնական և անպաշտօն աւաղակներից, բռնաբարոյներից. հայը մեղաւոր է և յանցաւոր, որովհետև նա իւր արիւն-քոտիների, դառն չարչարանքի պողի մեծ մասը օսմանեան և ռուս կայսրութեան տալով զանազան սուրբերի ձեւով՝ մերժել է կամենում ձրիակերներին իրան անհրաժեշտ ամենասակաւիկ ուտեստն ու հագուստը, որպէս զի իւր քաղաք փորը կշտացնել կարողանայ զոնէ չոր հացով և մերկութիւնը ծածկի հնամաշ լաթերով. հայը մեղաւոր է և յանցաւոր, որովհետև նա իւր լեզուն, կրօնը, դաւանանքը կաշկանգումներից է ուզում աղատել և իբրև ուրոյն ազգ ապրել.... վերջապէս հայը մեղաւոր է և յանցաւոր, որովհետև նա իւր այդ բոլոր ձգտումների իրազորումը նախ քաղաքական և ապա տնտեսական կատարեալ ազատութեան մէջ է տեսնում և այդ նպատակով էլ աշխատում իւր անբռնաբարելի ժառանգութիւնը եղող հայրենիքում:

Իսկ այս մեղքի և յանցանքի պատճառով պէտք է պատժել հային, որ յանդիմում է 500 տարւայ պատմական ստրկական դերից դուրս գալ.... Այսպէս է մտածում և գործում տասնեակ տարիներից ի վեր օսմանցին, այսպէս է մտածում և գործում նաև ռուսն այսօր:—Օրկելի պետութեան ամբողջ ծանրութիւնը իւր վրայ կրող պատուանդանից, որպիսին հայն է, և տալ նրան ոչ միայն անկախութիւն, այլ և մարդավայել կեանքի թեթեւ դիւրութիւն՝ նշանակում է զրկել օսմանեան քաղաքական կեանքից.—այս միտքն է սարսափեցնում կարմիր սուլթանին այնպէս, ինչպէս և սպիտակ ցարին՝ ուրուականը այն ապագայ ազատ, անկախ Հայաստանի, որը ռուսական աշխարհակալութեան առաջնադասման դէմ իբրև անխորտակելի պատնէշ պէտք է կանգնի և մի անգամ ընդ միշտ ցնորք դարձնէ ռուս քաղաքագիտութեան ձգտումների իրազորումը թէ՛ Անատոլիայում և թէ՛ կենտրոնական Ասիայում՝ դէպի Հնդկաստան: Եւ որպէս զի հայը չը կարողանայ թէ մէկին և թէ միւսին վնասներ պատճառել իւր նպատակներով՝ պէտք է նրան հետզհետէ ձնել, արիւնաքամ անելով դարձրել չոր կմախք և ապա մի քաղցիով փշուկ կրճախքը ու այդպիսով նրա գոյութիւնն իսպառ մնջել աշխարհի երեսից:

Հայաջինջ քաղաքականութիւնը երկու բռնականների էլ նպատակն է կազմել և կազմում՝ այն տարբերութեամբ, որ օսմանցին երկուսի ժամանակ է՝ որ բացայայտ է գործում, իսկ ռուսը միայն այսօր է նոյնն անում, թէև փոքրիկ չափերով, որովհետև աղգային ամեն տեսակ հաստատութիւններ — ուսումնարաններ, զբաղարան-ընթերցարաններ, բարեգործական և հրատարակչական ընկերութիւններ և այլն իւր ձեռքն անցկացնելը կամ փակելը՝ նրա առաջին քայլն էր կազմում: Այսօր ռուսը նախափերջին հարւածն է տալիս հայութեան աղգային ինքնուրոյնութեան՝ խելով նրա ամենասրբազան ժառանգութիւն եկեղեցական կալածների եկամուտները, հետեւաբար և՛ վաղը կալածները և եկեղեցիները:

Սակայն ռուսահայի համբերութիւնն այլ ևս սպառւում է. նա ցարին և նրա բռնի ոյժերին ընդդիմադրում է այսօր արեան արժէքով, և հէնց զբանու մէջ է դանդաղում ռուսահայի պատմական կոչումը ու քաղաքական վեհ պարտականութիւնը:

Աշխարհակալական ձգտումների դերի դարձած Ռուսաստանը՝ կանգնած նաև հին հռոմէական յբարոյական անկման՝ նախօրեակում ստիպւած է արտակարգ ձնշումների դիմել թէ հարազատ և թէ մանաւանդ հպատակ այլ ազգերի վերաբերմամբ, որպէս զի նրանց ամենատեսակ միջոցների բռնի իւրացումով իւր ահալի ղինւորական և զգուշի «հոգեւորական» բանակները պահպանել և հետզհետէ մեծացնել կարողանայ ցարիզմի քաղաքական ցնորքներն իրազորելու և հպատակ փոքրիկ ազգութիւնները սլաւօնականութեան մէջ ձուլելու համար: Եւ որովհետև ռուսահայը նրա ծրարողի մէջ մի առանձին և կարեւոր տեղ է բռնում, որովհետև նրա հարստութիւնը կարող է միլիոնաւոր ձրիակերների բաւականութիւն տալ, ուստի նա աննկարագրելի անաւօթութեամբ և օրը ցերեկով պաշտօնական աւաղակութիւն էլ է անում կեղտոտ ձեռքը մեկնելով հայ եկեղեցիների, վանքերի և այլ հաստատութիւնների կայքերը, նրանց եկամուտները, որ 150 միլիոնի է հասնում: Արիւնների, սրերի և գնդակների ազդեցութեան տակ նա յափշտակում է հայից այն բոլորը, ինչ որ նա՝ հայը՝ թէ՛ իւր և թէ՛ հէնց կայսր-աւաղակի փառաբանած Աստուծուն է ներարբերել սերունդներից սերունդ: Կա չի բաւականանում հայից ստացած ամենածանր տուրքերով....

Հզօր ցարը կատաղած է մի բուն հայութեան դէմ, որ վերջին տասնեակ տարիների ընթացքում աւելի խիստ ապացուցեց, թէ խաղաղիկ չի կարող դառնալ Արջի ձեռքում, և չը դարձաւ ու չի էլ դառնայ.... Մենք սրան հաւատում ենք:

Իւր դեռ թարմ արեան մէջ մինչև սրունքները

խրաճ հայութիւնը երբէք այնքան չի հիասթափւել ուսական ապերախութիւնից—և զրա մէջ է նրա անխորտակելի զօրութիւնը—, որքան այսօր.... Ազատութեան հայ մուրացկանները վերջապէս մեկուեցան իրանց տեղերում: Արանց Ուսուցիչ ստացած ապտակը և պատասխանը հզօր է, և նրանք այլ ևս չեն համարձակուում վեր բարձրացնել ձիւղւթմական իրանց աչքերը: Արանք արձանացել են և չեն յանդգնում շարժւել ոչ թէ այն պատճառով, որ ներկայ սարսափելի տեսարանից բացի՝ միայն այս օր են տեսնում Սեծ Աւագակին կանգնած Սեծ Մարգարայանի կողքին և միշտ պատրաստ մի աւելորդ անգամ էլ ծծել հայի անորոշելի արիւնը, կամ այն պատճառով, որ իրանց փառարանած խաչը արիւնախում «սրտակիր» եղբայրների զլխի վերեւում համբուրւում է կիսալուսնի հետ,— ո՛չ, այս եղակի տեսարանի ազդեցութիւնը ոչինչ է և այնքան էլ ուշադրութեան արժանի չէ, ինչպէս այն շեշտակի նայւածքի ազդեցութիւնը, որ կատաղած հայութիւնն է ուղղում թէ՛ նրանց և թէ՛ իւր երկու հզօր, բայց բարոյապէս դաժաժ թշնամիներին:

Այդ նայւածքը հզօր է, այլո՞ղ և խանձո՞ղ: Այդ նայւածքի մէջ ենք տեսնում հայութեան փրկութիւն, նրն ու ազատութիւնը, քանի որ նրա շարժումներից շարժւում են նաև անպիսի ժողովրդական այլքներ հայութեան մէջ, որոնք մինչև այժմ անշարժ և քաւացած էին:— Ահա՛ մի անընկճելի և բարդող ոյժ, որ ուսական հսկայ յիմարութիւնը անձամբ տուեց հայ յեղափոխութեան՝ նրա շարքերն ակամայ մըտցնելով հայ բուրժուաչիային և հոգեւորականութեան:

Ուրեմն, ժամ է, որ մենք ամենքս մեր աչքերը բաց անենք և դիտենք իրականութիւնը: Ժամանակն է, այո՛, տեսնելու, որ Սասունի Օւշիթունի բարձրաբերձ լեռները սև ամպ է պատել— աղետալի փոթորիկ է սպասւում, այո՛, ալեկարդ Մասիսից և մեր խնկելի նահատակների գերեզմաններից ձայնում են՝ «փշուղ գարեւոր շղթաները» և մենք, հայ եղբայր ենք, եթէ չենք ուղում 20-րդ դարում Մահիկի և Արշի հայաջինջ քաղաքականութեան զոհը դառնալ՝ ապա ուրեմն ժամանակ է, ու ամեն միջոց գործ դնենք վճռական քայլեր կռիւի դաշտ վազելու: Այս պիսի քայլին հայութեան բոլոր դասակարգերը— բանւոր, կապիտալիստ, քաղաքացի, դիւղացի և հոգեւորական— ձեռք ձեռքի պէտք է տան և ընդհանուր ուժով պէտք է դուրս գան իրանց ընդհանուր թշնամու առաջ: Այո՛, ուր վառն գը ընդհանուր է, այն տեղ և կռիւն է, ընդդիմադրութիւնը ընդհանուր պէտք է լինի:

Յարենք և փարենք յեղափոխութեան սուրբ Պօռչին, եթէ ուղում ենք մեր գոյութիւնը պահպանել և իբրև հայ մարդ ապրել աշխարհի վրայ....

Ք Ր Օ Ն Ի Կ Օ Ն

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

Մտնելով բարեկամիս սենեակը, ես նրան չը գըտայ մենակ: Ներկայ էին երկու հօգի ևս, որ ինձ անծանօթ էին: Նրանցից մէկը նիհար էր, միւսը բաւական գիրուկ, մէկը բարձրահասակ էր, միւսը գրեթէ կարճ, մէկի կուրծքը քիչ ներս էր ընկած, ուսերը քաշւած դէպի վեր, խկ միւսն ունէր մի լայն կուրծք և կարճ վիզ: Երկուսն էլ ժողովուրդ էին, երկուսն էլ երեսուն տարեկանից ատիւ էին թւում, երկուսն էլ այդ քայլերի կարմրած աչքեր ունէին— փնտրանութիւնից— բայց որքան տարբեր էր նրանց աչքերի հայեացքը, նոյնքան էլ տարբեր էին նրանց շարժւածքները:

Իմ գալուստ պատճառաւ ընդմիջւած խօսակցութիւնը վերսկսւեցաւ գրեթէ իսկոյն:

— Ես իմ իրաւունքն եմ համարում ինձ անւանել Հնչակեան, կըր ու փափուկ շարժումներ անելով, ասաց Վարձահասակը (այսպէս անուանենք) և անպիսի ոլորուն շեշտերով և փափկացած ձայնով, որ կարծես թէ բառերի հետ ձիթախղ էր կուլ տալիս:

— Ինչպէս, հարցրեց Բարձրահասակը, և նրա ձայնը հնչեց խուլ կերպով, մինչդեռ աչքերը, քիչ ծանր կոպերի տակից, անշեղ ու միապաշար հայեացքով ուղղեցան Վարձահասակի աչքերի մէջ:

— Ինչպէս... Ինչպէս թէ՛ ինչպէս... մի քիչ ապշածի նման կրկնեց հարցը Վարձահասակը:

Բարձրահասակը ոչինչ չը պատասխանեց. միայն նրա ամբողջ նայւածքը, ուսերը վեր քաշւած և գըլուխը փոքր ինչ կախած ներս ընկած կրծքի վրայ, ըստացել էր հարցանշանի ձև:

— Այնպէս, յարեց Վարձահասակը, որ ես պատկանել եմ և պատկանում եմ Հնչակեան Վոսակցութեան, այսինքն ես նրա անդամն եմ:

— Ընդունում եմ, որ դուք կարող էիք ժամանակին պատկանել այդ Վոսակցութեան, բայց դուք հերձաժողներից էք:

— Նրանք, որոնց դուք անուանում էք հերձաժողներ, նրանք են իսկական Հնչակեաններ, ասաց Վարձահասակը և նրա ձայնը կարծես կաթի պէս սահեցաւ հաստատուն ջրթներից:

— Ինչպէս, նորից տուեց միևնոյն հարցը Բարձրահասակը, որի համար, ըստ երևոյթին, միւսի խօսքը պարկ էր որ և է նշանակութիւնից:

Վարձահասակի դէմքի վրայ մի վայրկեան երևաց շփոթութեան նշոյլ, բայց տիրանալով իրան՝ մեղմաստ ձայնով ծառեց.

— Որովհետեւ հերձաժողներն անկեղծ են, նըռանք սիրող են յեղափոխական գործի, նրանք սիրում են իրանց ազգը, նրանք իրաւացի են իրանց յարձակումներով «հին» Հնչակեանների դէմ, նրանք վերականգնում են կուսակցութեան ոյժերը, նրանք Ամերիկայում գաղթականութեան մէջ գործօն տարր են կազմում, նրանք...

Այստեղ Վարձահասակը կանգ առեց, կարծես ցանկանալով իրան հաշիւ տալ մի քայլ, թէ ինչ

ապաւորութիւն գործեցին իր խօսքերը միտի վրայ: Վերջինս շարունակում էր մնալ իր հարցանշան նստածքում և միայն մի հազիւ նշմարելի հեգնական ժրպիտ խաղաց նրա բարակ շրթների անկիւններից մէկում:

— Ասածներս անհերքելի են, շեշտեց Կարճահասակը:

— Արդէն նրանց մէջ հերքելու էլ բան չը կայ, ցրովհետեւ նրանք բոլորովին անորոշ են:

— Ինչպէս... յուզեց Կարճահասակը:

— Պարզապէս, պատասխանեց հեգնութեամբ Բարձրահասակը. — դուք անկեղծ էք... դուք սիրող էք... դուք սիրում էք... դուք իրաւացի էք... դուք յնոր էք... դուք ամենագործոն էք... այդ բոլորը բառեր են, բառեր ու բառեր, որ կարող էք հղովել ամեն ձեռով և եղանակով և դարձեալ ոչինչ ասած չէք լինիլ...

— Ինչպէս...

— Եւ մանաւանդ ապացուցած չէք լինիլ, թէ դուք Հնչակեան էք, «հին» լինի, «նոր» լինի, ինչ անական կուզէք կպցրէք ձեր ճակատին, վերջապէս Բարձրահասակը: Նրա դէմքի վրայ նկատուում էր ձանձրոյթ. նա յօրանջեց, վառեց մի ծխախոտ և առանց ուշադիր լինելու Կարճահասակի փաստաբանական ապացոյցներին, յանկարծ ընդմիջելով նրան, ասաց փոքր-ինչ խիստ շեշտով.

— Դուք ճանաչում էք Հնչակեան Ծորագիրը:

— Ի՞նչ Ծորագիր...

— Ձեր կուսակցութեան, այսինքն Հնչակեան Կուսակցութեան Ծորագիրը, պատասխանեց Բարձրահասակը, հեգնորէն շեշտելով «ձեր» և «Հնչակեան» խօսքերի վրայ:

— Մենք չենք կարող ընդունել մի Ծորագիր, որ սօցիալիստական է:

— Բայց երբ, պառակտումներից առաջ, եղբայրս ձեր Հնչակեան Կուսակցութեան, ընդունում էիք այն Ծորագիրը:

— Կային ոմանք այժմեան հերձաւորները, որ ընդունում էին, կային միւսներ, որոնք, թերեւ չէ հասկանալով այն, ուղղակի անդամ էին դարձել մի կուսակցութեան, որ գործոն դեր էր կատարում և կային այնպէս ուրիշներ ևս, որ երբեք ընդունած չեն:

— Շատ բարի. դա մի երեւոյթ է, որի նկատմամբ թերեւ կարելի է գտնել բացատրութիւն, մի բացատրութիւն, սակայն, որ պակաս չի փայլիլ նաեւ տարօրինակութիւններով: Բայց խնդիրն այժմ նրանումն է թէ ներկայումս ճանաչում էք դուք Հնչակեան Ծորագիրը, որ սօցիալիստական լինելով հանդերձ՝ ազգային է. այո՞, թէ՞ ոչ:

— Ո՛չ:

— Աւրեմն դուք Հնչակեան չէք...

Եւ այս ասելով, Բարձրահասակը ելաւ տեղիցը, երկար ոտքերով մի բանի քայլ անելով, կանգ առաւ սենեակի մէջտեղ և յարեց աւելի խիստ շեշտով.

— Եւ ուրեմն իրաւունք չունեք կամայորէն իւրացնել ձեզ այդ անունը:

— Մենք նոր Հնչակեան ենք, առաջացրեց Կարճահասակը:

Բարձրահասակը ձեռքով ու գլխով բացասական նշան անելով, հեգնորէն ծիծաղեց, ապա ուսերը վեր

քաշեց, կրկին անց ու դարձ արաւ սենեակում, և յանկարծ կանգ առնելով, դառնացած շեշտով, խոսեց. — ու դառնաւ, արագաբար խօսեց, հարեւորով սաեպ ոգը՝ երկար թեւերի կտրուկ շարժածքներով:

— Ահ, տարօրինակ կատակ, այդ «հին» և «նոր» Հնչակեան յորջորջումը: Հնչակեանը միայն մէկ կարող է լինել և է՛, նա երկու տեսակ լինել չէ կարող: Իսկ դուք ճգնում էք նրան դարձնել երկերեսանի Յիսնուս:

— Մեր երեսն է իսկականը, ճշմարիտը, բուն Հնչակեանը... մէջ բերաւ Կարճահասակը:

Բարձրահասակը դժգոհ ու ձանձրացած արտայայտութեամբ ծածուկեց երեսը և ձեռքով մէկ անհամբեր շարժածք արաւ:

— Այդ խօսքերով ձեր պարկի վերջին հարստութիւնն է, որ հանելով նրա միջից, թողնում էք նրան այլ ևս գոտարկ: Ի՞նչ է Հնչակեան, ասացէ՛ք ինձ:

— Հնչակեան նա է, ով պոտկանում է Հնչակեան Կուսակցութեան:

— Ես հարցնում եմ ի՞նչ է և դրա բացատրութիւնից յետոյ միայն կարելի է ասել թէ ո՞վ է... Դուք չը պատասխանեցիք հարցին... Ի՞նչ է Հնչակեան Կուսակցութիւն, պատասխանեցէ՛ք սրան:

— Յեղափոխական կուսակցութիւն է, Հնչակեանն էլ յեղափոխական է:

— Յեղափոխական ուրիշ մարմիններ էլ կան, որպէս և ուրիշ յեղափոխականներ, բայց նրանք Հնչակեան չեն: Եթէ դուք ձեզ յեղափոխական էք համարում, դա դեռ չէ ապացուցանում, որ դուք Հնչակեան յեղափոխական էք: Եթէ դուք ձեզ համարում էք Հնչակեան Կուսակցութիւն, այդ էլ ճիշտ չէ, որովհետեւ դուք հերձաւորներ էք, որ չէք ընդունում Հնչակեան Ծորագիրը: Գարձեալ հարցնում եմ. ի՞նչ է Հնչակեան:

Կարճահասակը չը կարողացաւ խկոյն պատասխանել: Իր քիչ իւզով պատած աչքերը վեր բարձրացնելով, ուղղեց աչքերը Բարձրահասակի վրայ, որի ձայնը գողում էր՝ լի դառնութեամբ: Եւ մինչդեռ Կարճահասակը պատրաստուում էր ինչ-որ ասելու, նա եկաւ կրկին նստեց իր աթոռի վրայ, ապա նորից բարձրացաւ, մի բանի քայլ արեց առաջ ու յետ և, միշտ իր ձեռքի շարժածքներով կտրելով օդը, խօսեց բարեկացած ձայնով.

— Գիտէք ի՞նչ է Հնչակեան: Այդ խօսքն ամփոփում է իր մէջ մէկ ամբողջ հասարակական-փիլիսոփայական աշխարհայեացք և մի որոշ իդէալ: Այդ խօսքով հասկանում եմ մի շարք սկզբունքներ մարդկութեան, որպէս և ազգային ընդհանուր կենցաղի և առաջադիմութեան մասին, հասկանում եմ մի շարք իրար պայմանաւորող հասկացողութիւններ հասարակական և անհատական կեանքի մասին՝ սրա աղատութիւններով, ամեն աղատութիւններով, ամբողջ աղատութեամբ. հասկանում եմ վերջապէս բաղադրական մի որոշ դաւանանք, որ ունի իր սկիզբը, շարունակութիւնը և անվախճան առաջխաղացութիւնը դէպի ապագան:

— Դա սօցիալիզմն է, ամփոփեց իմ բարեկամը, որ մինչև այդ ժամանակ, ինձ պէս, լուռ հետևում էր վիճաբանութեան:

— Այո՛, հաստատեց Բարձրահասակը, սօցիալիզմն

է, որ մեր ազգային կեանքում ներմուծել է շնչակեան անուան տակ, այս վերջինն յայտարարած լինելով իրան «սօցիալիստ-յեղափոխական», և որ ընդունել է իրա յատուկ ծրագրային հիմքը և գործնական կերպարանքը, համաձայն հայկական իրականութեան... Այն ամենքը, շարունակեց նա խոր շունչ առնելուց յետոյ, այն ամենքը, որոնք այդ իշխալի, այդ աշխարհաստեղծութեան, այդ սկզբունքների, այդ դաւանանքի հետեւողը չեն և չեն ընդունում գրանցով ներշնչած որոշ գործունէութիւն, չեն կարող անուանուել շնչակեան:

— Կերողութիւն, բանի որ անգամ եմ շնչակեան կուսակցութեան, ուրեմն և շնչակեան եմ, մէջտեղ բերաւ Կարճահասակը, որի այտերը կարծել էին յուզմունքից և բերանից արդէն սկսել էին դուրս ելնել անտեղի և մինչև իսկ վիրաւորական բացականչութիւններ: Բարձրահասակը, սակայն, կարծես չէր լըսում այդ բացականչութիւնները: Կա գրաւած էր եւրեւմէմ մտքերով, որ այդ րօպէին եւում էին նրա գլխում: Քիչ աւելի տաքանալով, նա առաջ տարաւ իր խօսքը:

— Ինչպէս. դուք մինչև իսկ անգամ էլ չէք այդ կուսակցութեան, որովհետեւ դուք մեկուսացած էք և ինքներդ ձեր խմբին առանձնակի պահելով, շնչակեան կուսակցութիւն անունն էք տալիս: Բայց դուք չէք կարող այդ յաւակնութիւնն ունենալ: շնչակեան ասւած կուսակցութիւնը, այնպէս, ինչպէս նա գծադրուել ու զարգացել է մի որոշ Ծրագրի շուրջ, ուրիշ ոչ չինչ չէ, եթէ ոչ մի քաղաքական մարմին, որի *raison d'être*-ը, գոյութեան իրաւունքը հիմնած է որոշ աշխարհաստեղծութեան, սկզբունքի և դաւանանքի վրայ, այսինքն իր Ծրագրի հիմնական կէտերի վրայ: Միանգամ խախտեցաւ նրա այդ հիմքը, դրանով խախտւում է և նրա գոյութիւնը և դառնում ինչ կուսակցութիւն որ կուզէք, բայց ոչ շնչակեան: Իսկ այն մարմինները, որ շարունակում է հաւատարմաբար կառուցել իր շէնքն այդ հիմքի վրայ, հանդիսանում է իսկական շնչակեան կուսակցութիւն կազմող մարմին:

— Բայց նա կարող է փոխել և պէտք է փոխել իր սկզբունքները ժամանակի պահանջի համաձայն, մէկ առանձին նշանակութեամբ շեշտելով վերջին խօսքերի վրայ, բացականչեց Կարճահասակը, և նրա աչքերը փայլեցան տարօրինակ յուսով:

— Հա, հա, ժամանակի պահանջի համաձայն փոխել սկզբունքներ, ծիծաղեց հեգնաբար Բարձրահասակը. դա քամէլէօնական ընթացք է դառնում, մէկ օպ. պօթօթիւնիզմ, որ կործանում է ամեն սկզբունք և իդէալ: Ժամանակի պահանջի համաձայն կարելի է, այո, և պէտք է փոխել մի կուսակցութեան գործնական տակտիկան, բայց ոչ թէ նրա սկզբունքները, որ ներշնչողն են նրա գործի ու գործունէութեան, որ որոշող ու պայմանաւորող են նրա ընդհանուր ուղղութեան, Այն րօպէին, երբ այդ ուղղութիւնը խեղաթիւրւում, այլակերպւում է և ի վերջոյ շեղւում է սրան մինչև այդ ժամանակ ղեկավարող սկզբունքներից. նա դադարում է այլ ևս լինել միևնոյն կուսակցութիւնը. ինչ անուն կուզէք տւէք նրան, բայց ոչ իր նախկին անունը, որի նշանակութիւնը, իմաստն ու հիմքը ալ ևս ուրացել էր, դրժել էր:

— Մենք իրաւունք ունենք այդ անունը կրելու և մեզնից դուրս շնչակեան որ և է մարմին չենք ճանաչում, պնդեց իր կողմից Կարճահասակը:

— Գրեթե չենք շնչակեան Ծրագիրը, ոչ առանց զարմանքի բացականչեց Բարձրահասակը:

— Այսինքն մենք այդ Ծրագիրը համապատասխան չենք համարում մեր հայեացքներին, կարճ վարանումից յետոյ պատասխանեց միւսը:

— Հետեւաբար, դուք պէտք է կազմէք ձեր հայեացքների (եթէ այդպիսի բան ունեք) համեմատ մի ծրագրի: Դուք այնպէս չէք մտածում, ինչպէս շնչակեան Ծրագիրը. շատ լաւ, և ուրեմն հրաժարեցէք և շնչակեան անունից, որը կրելու արժանի են միմիայն նրանք, որոնք մինչև այսօր նկատուում են այդ Ծրագրին իբրև իրանց հայեացքների արտայայտութիւն:

— Իրաւունքը մերն է, նրանց չէ, որովհետեւ նրանք անկեղծ չեն, նրանք վատեր են... աւելի և աւելի տաքանալով, յամառում էր Կարճահասակը:

Բարձրահասակի աչքերը մի վայրկեան մթնեցան, ապա նա արհամարհանքով թափ տւեց ձեռքով և ըսկրեցով անց ու դարձ անել սենեակում, ըթի տակ մթմթեց:

— Ինչ տարօրինակ մասխառութիւն... Եւ բարձրացնելով ձայնը, յարեց՝ ձեր եղունկները շատ պինդ էք խրում շնչակեան անուն մէջ, մինչդեռ ինքներդ ոչ միայն շնչակեան չէք, այլ և հակառակ էք նրան: Գուցէ գրանում գաղտնի գիտում կայ: Բայց դա ինձ չէ հետաքրքրում և չեմ ուղում թափանցել ամեն տեսակ մթին անկիւններ, ուր գուցէ նիւթւում են շատ մթին գործեր: Ես ուզում եմ մնալ միշտ տեսական բանականի մէջ, և, յիրաւի, զաւեշտական եմ գտնում, որ դուք ամենքդ յամառաբար անուանում էք ձեզ շնչակեան և միաժամանակ բորեանի պէս ծղկունում էք փոքր ու քանդել այն հիմքը, որի վրայ հաստատւած է շնչակեան կուսակցութիւնն իր գոյութեան իրաւունքով, իր հասարակական զիրքով և իր գործունէութեամբ:

— Իսկական շնչակեան մենք ենք, որ կանք և մենք միայն իրաւունք ունենք կրելու այդ անունը: «Հինները» անկեղծ չեն, չար են, նրանց տունը պիտի քանդենք, նրանք... Նրանք... և այլն: Կարճահասակի բերանից տեղացին մի շարք հայհոյանքներ, որ լսել կարողանալու համար պէտք է յատուկ ձեւի ակնջներ ունենալ, և որ, հետեւապէս, անկարելի եմ համարում կրկնել այստեղ:

Բայց Բարձրահասակը րօպէ անգամ չը համբերեց:

— Իդիօտ... հարւածեց նա խուլ ձայնով և զրգւանքով շրջելով՝ արագ դուրս եկաւ սենեակից:

«Իրաւունք ունի» եղաւ առաջին մտածումս, երբ դուռը փակեցաւ նրա ետեւից: «Արժէ» արդեօք խոզերի առաջ գոհարներ ցրել» եղաւ յաջ րդ մտածումս, երբ ես էլ զգալով զլւանք, շտապեցի հեռանալ սենեակից:

ԿՈՎԿԱՍԵՑԻ.

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՊԱՐՍԿԱ-ԹՐԲԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱԳԼՈՒԽ

5 Մայիս, 1903.

Վերջին տասնեակ տարիների ընթացքում թիւրք կառավարութիւնը՝ ծրագրելով հայկական ջարդերը ամենից առաջ, իւր այդ նպատակին հասնելու համար, գիմեց քիւրդ աւազակաբարոյ ցեղերի աջակցութեանը: Զինելով և թշնամ ցնելով բրդերին իրենց դարերի ընթացքում սիրով ու համերաշխութեամբ ապրած զըլացի հայերի դէմ, ու նրանց միջոցով կատարել տալով հայկական այն ահաբեկ կոտորածները, որոնց նմանը երբ և իցէ տեղի ունեցել է պատմութեան ընթացքում, Օսմանեան կառավարութիւնը երկիւղ կրելով, որ ապագայում, իւր ձեռնադրին նպատակները իրագործելու համար, իւր իսկ ձեռքով զինւած այդ վայրենի ոյժը, կարող է մի օր իւր զէնքը թիւրքերի դէմ դարձնել, մի բան որի հեռապատկերն իսկ իրեն սարսափեցնում էր, սկսեց միջոցներ ձեռք առնել բրդերին անվտանգ և միանգամ ընդ միշտ իւր ձեռքում գործիք դարձնելու համար: Օ՛, Օսմանցիները շատ ճարպիկ են այդպիսի միջոցներ գտնելու մէջ: Վերջին տարիները թիւրք կառավարութիւնը, յաճախ ընդհարելով իւր հպատակ ազգութիւնների և Եւրոպական դիպլոմատիայի հետ՝ լաւ, շատ լաւ հասկացաւ թէ՛ ինչ որ չի կարելի անել ոյժով, նոյնը շատ հեշտութեամբ կարելի է անել խորամանկութեամբ և խաբէութեամբ: Այդ վէճը, որ շատ բիչ անգամ է դաւաճանել թիւրքերին, նրանք սկսեցին գործ դնել նաև բրդերի նկատմամբ: Համիդական կառավարութիւնը սկսեց մի կողմից նշանաւոր ու ազդեցիկ քիւրդ ցեղապետների որդիներին ծառայութեան կամ կրթելու պատրաստելով Պալիս տաննէլ, ուր նրանք պահուում էին իբրև պատանդներ, իսկ միւս կողմից՝ թիւրք գործակալները՝ շարունակ պըտըտելով քիւրդ ցեղերի մէջ, ամենայն եռանդով ըսկըսեցին բորբոքել և վառ պահել նրանց մէջ արգէն վայրացի ի վեր քրոնիկական բնաւորութիւն ստացած ցեղային թշնամութիւնները, որի հետեանքը լինում էր այն, որ քիւրդ ցեղերի մէջ յաճախ տեղի էին ունենում՝ կատաղի և արիւնահեղ ընդհարումներ, որոնք գոհունակութիւն էին պատճառում թիւրք կառավարութեանը և նպաստաւոր էին նրան այն, բանով որ բըրդերը ցեղային այդ մշտական կռիւները ի նկատի ունենալով՝ ստիպւած էին լինում հլու կերպով հպատակել կառավարութեան կարգադրութիւններին, վերոյիշեալ դէպքերում նրա պաշտպանութիւնը վայելելու համար: Իրերի այդպիսի վիճակից շատ գոհ էր Համիդի կառավարութիւնը: Օգտւելով մի կողմից նրանց վայրենի բնազդներից և գործադրելով իբրև զէնք իւր մըթին հաշիւները կարգադրելու համար, միւս կողմից, նա իրան միանգամայն ապահով էր զգում, բրդերին այլ ևս անվտանգ համարելով:

Սակայն վերջերս այդ հաշիւները կարծես թէ սըլալ են դուրս գալիս: Պալիս պատանդ տարւած քիւրդ պատանդները՝ ստանալով կանոնաւոր թէև թրքական կրթութիւն և յաճախ շփւելով Պալիս ազատամիտ տար

բերի հետ, նրանք վարակեցին մի բանով, որի դէմ այնքան կատաղի կերպով կռոււմ է թիւրք կառավարութիւնը՝ ազգայնական ձգտումներով: Այդ երիտասարդները մի կողմից անձամբ մօտուց ծանօթանալով Համիդական կառավարութեան այն միջին նպատակների հետ, որոնք իրագործելու համար, այնքան տխուր և անպատւաբեր դեր պիտի կատարէին իրենց ցեղակիցները, իսկ միւս կողմից շարունակ յարաբերութիւն ունենալով Պալիս յեղափոխական մարմինների հետ, նրանց մէջ յղացաւ մի միտք, որը սկզբներում անիրագործելի մի երազ էր թւում: Սակայն շուտով այդ միտքը, այդ երազը իրական հողի վրայ դրեց և «Ազատ Բիւրսիստան» գաղափարը մի խուճը բրդերի բաղաբական դաւանանքը դարձաւ: Ցանկանալով իրենց գործունէութեան վայրը Բոսֆորի ափերից տեղափոխել հայրենի լեռները, աւելի հեշտութեամբ և աւելի ընդարձակ ծաւալով տարածելու համար քիւրդ ժողովուրդի մէջ ազատութեան և անկախութեան ոգին, նրանք սկսեցին մտածել հայրենիք վերադառնալու մասին, սակայն թիւրք կառավարութեան ձեռք առած միջոցների պատճառով, շատ բիչերին, այն ևս գաղտնաբար, յաջողեց երկիր մտնել: Սակայն այդ բիչերը ևս՝ մտնելով երկիր՝ ամենայն եռանդով սկսեցին իրենց պրօպագանդը և «Ազատ Բիւրսիստան» գաղափարը շուտով մայրենի հողի վրայ ունեցաւ մեծ թւով հետեւողներ: Առաջ եկած այդ բրդական շարժման մէջ մեծ դեր էին կատարում նըշանաւոր քիւրդ ցեղապետ Բէդրիսան-բէյը և իւր որդիները: Վերջիններից մէկը բիչ յետոյ արտասահմանում սկսեց հրատարակել «Բիւրսիստան» անունով մի թերթ, որը քիւրդ հայրենասէրների օրգանը դարձաւ: Կարճ ժամանակ գործելուց յետոյ բրդական այդ ցանկալի շարժումը, անցնելով իր գոյութեան առաջին ֆազիսը, սկսեց զգալի կերպով թուլանալ, բարեբաղդաբար այդ թուլութիւնը ժամանակաւոր երեւոյթ լինելով՝ շուտով տեղի տեց նոր և աւելի եռանդուն գործունէութեան: Այս անգամ շարժման գլուխն են անցել մի քանի ազդեցիկ և աչքի ընկնող շէյխեր ու ցեղապետներ, որոնց մէջ նշանաւոր է Համիդիանի և Նուրիայի բրդերի ցեղապետ՝ հոգակաւոր Շէյխ Իբրահիմայի որդի՝ Շէյխ Մահմէտ Սադըդը: Վերջերս այդ Շէյխի գործածած արհամարհական տոնը և ինքնուրոյն ու անկախօրէն գործելու բացարձակ ձգտումները յանկարծակիի են բերել թիւրք կառավարութիւնը և երկիւղ են ազդում նրան Մօտերս կառավարութիւնը մի բանի անգամ զանազան պատրաստելով փորձեց նրան Պալիս կամ՝ վան կանչել, բայց Շէյխը՝ լաւ հասկանալով թիւրք կառավարութեան յետին մտքերը, ամեն անգամ կտրուկ կերպով մերժեց այդ հրաւերները: Կառավարութիւնը ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ թիւրք բընակաւորութիւնը Վասպուրականում չէին տոկոս կազմելով, ինքը իւր պրեստիժը բարձր պահպանելու համար շարունակ ստիպւած է գիմել բրդերի՝ գլխաւորապէս նրանցից կազմած «Համիդիէ» զօրագնդերի՝ օգտակարութեանը, ոտիպեց ձգել և յարմար առիթի թողնել ըմբոստ Շէյխին պատժելու միտքը:

Վերջերս խիստ նկատելի է, թէ ինչպէս մի կարգ խորհրդաւոր անձնաւորութիւններ չըլում են քիւրդ ցեղերի մէջ, տարածում են գաղտնի գրութիւններ, կազմում են ժողովներ, ուր նրանք խօսում են քիւրդի ա-

կանջին առ այժմ անծանօթ բաներ և աշխատում պատրաստել ապագայ շարժումների համար: Այդ անձնաւորութիւնները «Ազատ Բիւրդիստան»-ի անդրանիկ առաքեալներն են, որ շրջելով հայրենի լեռների մէջ, եռանդով տարածում են իրենց բնութիւնից թէև վատ բնադղներով օժտած, բայց կենսունակ ու աղատասեր ցեղակիցների մէջ, ազատութեան, անկախութեան ու հայրենասիրութեան վսեմ գաղափարները: Ճիշտ է, դեռ քիչ է այդ գաղափարներին յարողների թիւը մայրերկրի մէջ, սակայն այդ շարժումը, որոշ հանգամանքների շնորհիւ, ուժեղանալու և ամրանալու ամեն զբաւական ունի: Այդ երևոյթը խիստ միեմարական է մեզ՝ հայ յեղափոխականներիս համար: Մինչև այժմ բրդերը մեծ խոչընդոտ էին հանդիսանում հայ ազգի ազատագրութեան գործին, կոյր գործիք դարձած լինելով թիւրք կառավարութեան ձեռքում, սակայն բըրգական նորածին շարժումը թող է տալիս մեզ լուստես լինել և յուսալ, եթէ ոչ այդ խոչընդոտի իսպառ վերացումը, գոնէ որոշ չափով թուլանալը: Արդէն այդ շարժման մասնակցողները վերին աստիճանի սիրով և յարգանքով են վերաբերում դեպի բոլոր հայերը ընդհանրապէս և ի՞նչ դեպի հայ յեղափոխականները մասնաւորապէս: Այդպէս, վերջերս վերոյիշեալ Շէյխ Սաբըղը խիստ սիրալիր ընդունելութիւն էր ցոյց տուել Շապիրանից անցնող մեր ասպատակներից երեքին, որոնց, մի բանի օր իր մօտ հիւր պահելով, ճանապարհ է դնում, 8 ոսկի էլ ճանապարհածախք տալով նրանց: Բիւրդը հայի ամենալաւ գրացին ու դաշնակիցը կարող է լինել, եթէ միայն նրա մէջ կարեւոր չափ ընդարձակ ծաւալով մուտք գործէ ինքնաձանաչութեան ու անկախութեան ոգին:

* * *

Պարսկա-թուրքական սահմանագծի վրայ Սարմիայից ընդամենը 4 փարսակ (28 վերստ) հեռաւորութեան վրայ Մար Գեաւառի բարձր լեռների լանջին ընկած են մի խումբ Ասորի գիւղեր, որոնց բնակիչները վաղուց ի վեր անուանի են իրենց կտրիճութեամբ և պատերազմասիրութեամբ: Այդ գիւղերը, որոնց մէջ նշանաւոր են Մովսնա և Բալուշանը, իրենց գիրքերի շնորհիւ միշտ ամուր պատուար են եղած հարեան բըրգերի յափշտակութիւնների դէմ: Շատ անգամ լեռնցի այդ ասորիները ստիպւած են եղել արինահեղ կոիւններ մղել հարեան Մար Գեաւառի, Գաշտի և Շամ-գիրանի բրդերի դէմ նրանց աւագակութիւնները զբաղելու համար: Ասորիների մէջ ասորիները գրեթէ ամեն անգամ յաղթող են հանդիսացել և շարունակ աւարի մասնելով քիւրդ գիւղերը, հարուստ աւարով յետ են դարձել: Ասորիների քաջութիւնը և նրանց կատարած ծառայութիւնները ի նկատի ունենալով, Պարսից կառավարութիւնը տարիներ առաջ՝ նրանցից անկանոն ցորերի մի վաշտ կազմելով և մեծ բանակութեամբ

զէնք և ռազմավորք բաժանելով, նրանց յանձնեց այդ կողմերի սահմանների պահպանութիւնը: Այդ բանը շարժեց քրդերի շար ականձը և նրանք սկսեցին առկթ փնտռել այդ գիւղերը միահամուռ ոյժերով բընաջինջ անելու համար: Մի բանի օր առաջ այդ առկթը ներկայացաւ: Ապրիլ 15-ին Մար Գեաւառի քրդերը յափշտակում են Բալուշան գիւղի հօտերից մի քանի չխարներ: Ասորիները անմիջապէս հետամուտ են լինում քրդերին և նրանց հետ կռիւ բընելով ծանր կերպով վիրաւորում են ցեղապետ Հասաղային և ոչխարները յետ խելով վերադառնում են իրենց գիւղը: Սակայն հէնց միւսնոյն գիւղերը Բալուշանը շրջապատում է Մար Գեաւառից և Գաշտից հաւաքած մօտ 2,000 բրդերով: Սկսում է արինահեղ մի կռիւ, որի ժամանակ Բալուշանցիք, չը նայած որ իրենց մէջ ընդամենը 50 կռուց հրացանաւորներ են եղած, բաջաբար դիմագրում են բրդերի այդ ահագին և հետզհետէ բազմացող ոյժին մի ամբողջ օր և գիւղեր, որից յետոյ փամփուշտների սպառուելու պատճառով ստիպւած են լինում նահանջի դիմել, սակայն այդ կրիտիկական լուսկում օգնութեան են հասնում Մովսնացիք և վերանորոգւած կարճ, բայց արինահեղ կռիւց յետոյ բրդերը փախչում են, կռուի դաշտում թողնելով 17 սպանւածներ, որոնց թուում կան 4 բէկեր, և մօտաւորապէս 30 չափ վիրաւորներ: Ասորիների կողմից սպանւում են 3 հոգի և 4 հոգի էլ վիրաւորում: Սակայն կռիւը այդ բոլորով չի վերջանում: Փախած բրդերը հետևեալ օրը կրկնապատկւած ոյժերով վերադառնում են և այս անգամ պաշարում են Մովսնան, բայց Մովսնացիք, չը նայած իրենց փոքր թիւին, այդ գիւղում 200 հրացանաւորներ կան, բաջաբար ամբողջ 5 օր դիմագրում են իրենցից բանապատիկ աւելի թշնամուն: Բրդերի բոլոր յարձակումները ամեն անգամ մեծ կորուստներով յետ են մղում Մովսնացիների կողմից: Այդ բոլորից յուսահատւած՝ բըրգերը առանց վերացնելու պաշարումը, վերջին օրերը սպասողական դիրք են բռնած մինչև հարեան ցեղերի իրենց օգնութեան գալը: Իսկ Պարսից կառավարութիւնը երկար ժամանակ տմարդի կերպով անտարբեր մընալուց յետոյ, միմիայն մօտ օրերս սկսել է զօրք հաւաքել պաշարւած բաջարի ասորիներին օգնութեան ուղարկելու համար: Հաւանական է, որ եթէ կառավարութեան միջամտութիւնը շուտով տեղի չունենայ, կըռիւը նորից կը վերսկսւի և այս անգամ կասկած չկայ, որ արդէն ուժասպառ եղած Մովսնան և շրջակայ 2-3 գիւղերը զոհ կերթան հետզհետէ հաւաքուող բրդերի վրէժխնդրութեանը:

Mars.

ԳԵՊՈՒՆԻ Թ. ԳԵՐԱԶԻՍՏԵՐԻ ՄԷՋ



Տեղույս թիւերը կառավարութիւնը խիստ խուզարկութեանց ձեռք զարկած է Մայիս 24 չարաթ օրէնի վեր. թէև վերջերս փոքր ինչ զաղրեցուցած է արտաքննապէս, սակայն ներքնապէս տեսակ տեսակ լրտեսներու միջոցաւ կը հետապնդէ Արամ՝ անուն մէկը զըսնել անպատճառ: Այս նպատակով էր, որ նոյն շարաթ օր ժամ 7 էն վերջ ընդհանուր խուզարկութիւն մ'ըրին: Մէկ օր առաջ և նոյն օր հազորդուած էր բոլոր անդամակցութեան որ հարկ եղած զգուշութիւններն ընեն: Թէվէրեւան Լարեմիայ անուն հայու մը տուն պիտի նային եղեր նախ, ասոր որդւոյն դժբաղդաբար ուշ կը հազորդուի: Լարեմիա աղան քաղաքէն բացակայ էր, առևտրական գործերով գիւղերն էր: Որդին երբ կիմանայ ընդհ. խուզարկութեան ձայնը, տունն ունեցած վեցհարուած, փոսիկուշտ և լն. զամբիւղի մը մէջ դրած, արիւշ հայ մ'ալ առջեւն առաջնորդ քրած, կենէ իւր տունէն. քիչ մ'անդին կը պատահին փօղիսի և ոստիկաններու, որք միթաբը հետ առած կերթային Լարեմիայի տունը խուզարկել: Միթարի անդիտակցօրէն առաջարկութեանը վրայ, ոստիկանք հետ առնել կուզեն Լարեմիայի որդին, Արշակը, որը պահ մը վարանած ձեռքի զամբիւղը կուտայ ընկերին, յայտարարելով անոր որ զամբիւղը շուկան տանի, ինքն ալ հիմակ կուգայ գնումները կընէ միասին: Ոստիկանները կը հրամայեն, որ զամբիւղը նային և կը յառաջանայ գէպի այն անձը, որուն յանձնած էր զամբիւղը: Արշակ կը նայի որ բանըն ըլլալիք չէ, ոստիկանի ձեռքն անցաւ զամբիւղը, կը նետուի ոստիկանին վրայ ըսելով յայտ զամբիւղը չպիտի նայուի: Կռիւր կը սկսի ոստիկանի և Արշակի միջև, իբր թէ միջամտել կուգան բանի մը հայեր, որոց մէկ բանին կուսիներ կը տեղացնեն ոստիկանին, մէկ բանին կը հսեն հրմշտկեն, կիներ ալ կոգնեն անոնց ու Արշակի յանգանութեան ու պոյաճի կարապետի և այլոց ծարպիկութեան շնորհիւ զամբիւղն արդէն ձեռքէն առնուած էր ոստիկանին: Ոստիկանները վիրենք բռնողներուն պատճառաւ չեն կրնար հասնիլ ոչ զամբիւղին և ոչ ալ Արշակի կամ պոյաճի կարապետի, որոնք տուներու մէջ, թաղին ներսերը անյայտացած էին: Ասոր վրայ կատարած, մանաւանդ ծեծ ուտող ոստիկանը, կը վաղէ շուկային կողմը, յձան գուլթարան՝ պուռալով: Մաս մը կերած ծեծէն և մաս մ'ալ խնդիրը մեծցնելու բաղձանքով՝ ստակածի ձեւեր, մեռնողի ձեակերպութիւններ կընէ, և ահա ասոր վրայ 20—30 զինուորականներ, հարիւրապետ և լն. կը խոյանան թաղին վրա 2—3 կարգի բաժնուած՝ կը պտտին փողոցները, հրակելով օր հայերը նորէն բան մը չի փախցնեն: Ետև զարկող խուճիկն ալ կանցնի մէկ տունէն միւսը, մէկ նայած աներին 3—4 անգամ, կրկին և կրկին նայելու պայմանաւ մանրադնին խուզարկութիւններ կը կա-

տարէ. թուրք հասարակութիւնն ալ կը խուժէ թաղին մէջ դիտելու համար: Մինչև միջնակոսին կը շարունակուի խուզարկութիւնը. ամեն մտած տեղերէն ամէնալավ կընեն բան մը գտած չըլլանուն համար. մէկ երկու տեղերէ միայն մէկ բանի թղթեր և երգարան մը կը բռնուին: 15-ի չափ անմեղ երիտասարդներ ալ կը բռնուին նոյն օրը և կը բանտարկուին: Նոյն գիշերը հայերը մեծ մտահոգութեան մէջ էին և շատեր չըրնայան. սակայն խուզարկութիւն և լն. չեղաւ, նմանապէս յաջորդ օրը կիրակի ալ, այլ միայն գաղտագողի շրտաններ թաղերը ժուռ կուգային: Ամենուս ալ կասկածը երկուշաբթի էր, որովհետեւ այդ օր տօնավաճառ ըլլալուն բաղձութիւ գիւղացիներ քաղաք կը լեցուն, հայերն ալ անպաճառ շուկան կիջնեն, կառավարութիւնն ալ ուրեմն, կրնար իւր խստութիւններն ու ծայրայեղ միջոցներն ձեռք առնել: Չենք գիտեր, սակայն, ինչ մտածումներով, նոյն օրն ալ լուութիւն պահեց կառավարութիւնը. ու և է ձեռնարկ չըրաւ: Լարեմիայի կէս օրէն վերջ միմիայն տուններէն թուղթ, երգարան գտնուողներուն համար խուզարկութիւն մը եղաւ թեթեւ կերպով: Շաբաթ օրուան բանտարկուածներն արձակեցան, այժմ՝ խստութիւններն, ըստ բաւականին վերցուած են. հայերու հետ իյնալ չեն ուզեր եղեր թիւրքերը, որովհետեւ քիչ շատ ալ իրենցմէ մարդ կը ջարդուի — բան մը՝ որմէ շատ կը վախնան, — մանաւանդ այստեղի հայերու յանգանութենէն: Թէպէտ և հարիւրապետ ոստիկանը շատ յանդիմանած է թէ «մեղք թագաւորէն բեղի տրուած ամսականին. հայերէն ծեծուիս, բռնած զէնքդ ու փամփուշտդ կրկին ձեռքէդ խլելու անոնցմէ. մեղք, մեղք բեղի...» սակայն իրենց ալ և ոչ մին համարձակ կրնար քալել հայոց թաղերն: Զամբիւղը չի յանձնող Արշակը, տուններէն թուղթեր գտնուող հայերը, պոյաճի կարապետ և լն. ինչ ինչ պատճառներով երեւան չեղնող երիտասարդներ, թուով տասնի չափ, փախստական կապրին, որոց և ոչ մին ձեռք ինկած է:

Թուրք տարրի ընթացքն անհանգուրժելի է. դրութիւնը վտանգաւոր է. գտնել կաշխատին իրենց փրկուածը, և քիչ շատ վախն ալ եթէ չըլլայ՝ շատ բաներ պիտի ընեն. բայց առ այժմ՝ ստիպուած են սպասել, լուել... Անոնք ինչ կուզեն՝ թող ընեն. Շ. Կարահիսարի երիտասարդութիւնը գիտէ իւր դասը կամ պարտքը, միայն իւր անսիրտ հարուստներն ալ քիչ մը օգնէին իրենց, կամ գէթ և թշնամանել չուզէին միութեան:

* * *

Յունիս 15 կիրակի իրիկուրէն երկուշաբթի օրուան պաղարին եկող ու ցորեն ծախող քիւրտերը, տօնավաճառի մէջ ցորենի առուտուրի տեսն, կուր մը կը հանեն Մորքոսեան Նիկայոս անուն անձի մը հետ. չուկային մէջ մէկ բանի հետ կը վարեն Նիկայոսի. ան խուհեմութեամբ չուզեր փոխարինել, այլ միայն փօղիսի

կը վազէ: Բերտերը նշմարելով զայս՝ անոր հետ ծեծ-կռուղ պարագլուխ քիւրտը անկէ հեռացնել ուզեցին, որպէս զի փօղիսը գալուն չի գտնէ զայն. մեր, երիտա-սարդներն կռահելով՝ կիյնան տօնավաճառէն խոյս տը-ւող քիւրտին ետեւէն քիւրտերը կը վայրանան հայե-րուն այդպէս անվախ կերպով իրենց ընկերոջ այսինքն քիւրտին ետեւէն երթալնուն, ու իրենք ալ հայերուն հետեւէն կերթան: Մերինները կը հասնին քիւրտին, տօ-նավաճառէն 10—15 քայլ անդին՝ զառիվալը՝ աշ-բիւրին դէմ կը բռնեն զայն ու ետ դարձնել կուզեն: Բերտերը խնդիրը հանրութեան կը վերածեն և կսկը-սին հայերուն կարգ մը քաղաքական խօսքեր ընել, խնդիրներ յարուցանել, ապստամբներ անուանել, որոնց ամենուն դէմ արհամարհոտ լուրձեամբ մը քիւրտին օձիբէն բռնած՝ և այն բազմութիւնը՝ որը գրեթէ քիւր-տերէ կը բաղկանար, ճեղքելով կը բերեն հոն՝ ուր որ կռիւր սկսած էր քիւրտը: Կերեար թէ բողբոջը հայ ըլլալուն համար փօղիսը չէր եկած, այլ ողնոտ զապթիէ մը, որուն մարդ չի յանձնելու փորձեր ըրին քիւրտե-րը, որոց միացած նաև թիւրքերէն ալ և բողբոջա-նութեան փափկութեանը համար գիտնալով հայոց դիր-քը կառավարութեան մօտ, սկսան խնդիրն աւելի տաք-ցընել, վայրագ ու բիրտ գոռումներ, կծու ակնարկու-թիւններ ընել, որպէս զի հայերը թող տան քիւրտը: Բայց մերինները միշտ վաննը նախատող լուրձեամբ մը կարեւորութիւն չի տուին և քիւրտը յանձնեցին զապ-թիէին՝ որ տարաւ ոստիկանատուն: Հոն քիւրտը կղեր-պարտէր թէ «յուս էրմէնի տինիմէ սէօվտի» (այս հա-յը կրօնքիս հայհոյեց): Իսկ Նիկողոս ի զօւր կը ջանար հաստատել, թէ անոնք զինքը ծեծած էին, ի զօւր կը խնդրէր արգարութեան պաշտպանութիւնը: Արդարու-թիւնը գիտաւ որ յանցանքը քիւրտերուն է, և թէ հայերը յանցաւոր ըլլալու երբէք բան մը ըրած չեն, սակայն քիւրտը պատժել, հայուն թշնամի տարրը յան-դիմանել, ո՛հ, միթէ կարելի՞ բան է այստեղի տրպա-րութեան համար: «Ի՞նչ շէյլէր այդպ տըր՝ով թող կը տրուի քիւրտը, որ պզտիկ բանի մը համար մեծ ի-րարանցում հանելու պատճառ պիտի ըլլար: Ահա այս է հասարակաց անդորրութեան արթուն հսկիչին, թուրք կառավարութեան ընթացքը:

Ասիկա ամենէն փոքր դէպքն է քաղաքէն դուրս պատահածներուն քով, հարկ կ'այ արգեօք նկարագրե-լու խեղճուկ հայ գիւղացոց ալ վիճակը: Ընթերցողը կրնայ երևակայել թէ, երբ քաղաքի մը մէջ, ուր նի-զամ կայ վերջապէս, այսօրինակ անիրաւութիւններ կը պատահին ու կը քաջաբերուն հայուն թշնամի տա-րերը՝ ալ որ աստիճանի զեղծումներ, բռնութիւններ, մարդկային խիղճը չի տանելիք զրկանքներ կը պատա-հին ամեն օր գիւղերը, ուր ֆէզայիներու վախն ալ չունին բիչ թէ շատ: Հոն, ուր արգարութիւնը գոնէ իբրեւ մեռած տառ չի գտնուած տեղերը, խեղճ հայե-րու և հայուհիներու գլխուն անյուր բարբարոսութիւն-կը կատարուին, գազանութիւններ, որոնք ծածուկ մնա-

ցած են ու կը մնան աշխարհի աչքերէն...

Մինչև ե՞րբ լուռ պիտի մնաք, ո՛վ անսիրտ հա-յեր, մինչև ե՞րբ ձեր հայրենակցաց կեղեքմանցն ու թշուառութեանցը անտարբեր աչօք պիտի նայիք, մինչև ե՞րբ մեր միակ յոյսը, յեղափոխական Ս. գործը, չպի-տի մօցնէք մեր ժողովրդեան ամեն խաւերուն մէջ ու մինչև ե՞րբ ամեն հայ իւր ունեցածը — խելք, դրամ՝ ոյժ — սիրով չը նուիրէ ազգին յեղափոխական Ս. գոր-ծին, որպէս զի ընդհանուր, զօրեղ և յամառ մի ա-պստամբութեամբ ընդվզուի Ս. Դիօշը պարզելով հայ-րենիքի մէջ, փշրենք գերութեան խայտառակ լուծը և փրկենք մեր հէգ ժողովուրդը իւր առօրեայ սոսկալի չարչարանքներէն և անկարագրելի տառապանքներէն:

20 Գոռնիս, 1903.

ԱՐՏԱԿ

Շ. Գարահիսար

ՆԱՄԱԿ ՏԻՎՐԻԿԵՆ

9, Մայիս, 1903.

1900 էն բարդուած յետեւալ տուրքերն կառա-վարութեան կողմէն խստիւ գանձուել սկսուած է. առ այս անօրինակ փութկոտութիւն ցոյց կուտան հարկա-հաւաքներ. գանձումի պահուն ամեն ապօրինի միջոց ներկի է, բաւական է որ դրամ ձեռք բերուի, կ'ը-ծես թէ հաւաքիչք մրցումի ելած են. փոքրիկ առար-կութիւնը մը՝ թէ և ըլլայ իրաւացի, լուտանքով և գա-նակոծութեամբ կը պատասխանուի իրբ պաշտօնէից կողմէ: Հարկահաւաքները՝ ընդհ. ջարդի տօնն սպաննը-ւածներուն տուրքերն ևս պահանջելու կը յանգանին զաշխ եւ ըսելով. ինչ դիւային հնարագիտութիւն և ինչ անգութ միջոց ողջերէն կաշառք կորզելու համար: Որչափ ցաւալի կատակերգութիւն կողոպտել, գործել և սպաննել. ասոնցմով չի գոհանալով՝ հայը կիւղեքելու, զա-ւախ է ըսել: Դժբաղդ նահատակներէ շատեր գերեզ-մանի իսկ չարժանացան որ գէթ իբր փաստ գերեզման-նին ցոյց տրուի. թէ և գարձեալ օգուտ չընեն երբ ա-մենակարող դրամը օգնութեան չհասնի:

Մեծ մարդասպանին ձագուկները իրենց խալիֆա-յին թերին լրացնել կուզեն՝ և թէ ունի, մեծ չարագոր-ծը սպաննեց, փոքրներն ալ սրին վարձը կը պահանջեն: Զինուորական տուրքը, որ առաջ իւրաքանչիւր թա-ղի մէջ հալը թաւեր կ'ըլլար, այժմ կառավարութիւնը տեսնելով թէ հայ ժողովուրդէն՝ աղքատութեան պատ-ճառով, և հին մեթոտով անկարող պիտի ըլլայ տուր-քերն՝ ամբողջութեամբ գանձելու նոյն իսկ կահ կարա-սի, տուն տեղ ծախելով հանդերձ, մտադրած է թաղե-րըն ի մի խառնելով հալը թաւեր ընել. որով մէկ կողմէն հայ ունեւորին վնասած և միւս կողմէն՝ ա

տուրքերն աւելի լաւ գանձած կըլլայ: Նոյն գրութիւնը գիւղերու համար ևս գործադրել որոշուած է. եթէ յաջողի իրականացնելուն կատեցաւ և բռնկելու կարգը անտարբեր հարուստներուն պիտի գայ:

Քէթմըլ—Նիւֆիլսի համար Սուլթանը որոշ ժամանակամիջոց մը տուած էր քէթմիներուն ղրաժական և ըն պատիժները շնորհ! ընելով. այս կարծուած շնորհէն պաշտօնեաներն աւելի օգտուեցան, որովհետեւ քէթմիներն արձանագրուելու և անձնագիր առնելու համար, երբ դիմում կընէին պաշտօնէութեան՝ անմէջ առարկութեամբ, արձանագրուելու ուղղութեան գումար մը չը շորթած անձնագիր չէր տրուէր:

Սուլթանի շնորհներն արդէն հաղուագէպ են. եղածներէն ալ ժողովուրդէն աւելի օգտուողներն պաշտօնեաներն են:

Տեղւոյս թուրք ժողովուրդը վերջերս կարծես մեծ ճակատամարտ մը շահեցաւ Սէնճան գիւղէն հայ աղջիկ մը ապօրինի կերպով թրքացնելով. հաւատացէք, որ եթէ Սուլթանի զօրաց յաղթական Ս. Բեդերպուրկ մտնելու լուրը առնէին՝ այսչափ չէին ուրախանար. որովհետեւ կեանքը մը միախառնութեան առաջնորդեցին... վայ ապուշներ:

Ընդհանրապէս վարչական և դատական ժողովոց հայ անդամներու ընտրութիւնը թուրք պաշտօնակիցներու քմահաճոյից և պէս պէս շահերու համաձայն կըլլայ, և ոչ թէ հայ ժողովրդեան օգտին համար: Երբ տեղւոյս Մեծլիսի իտարէի հայ անդամին ընտրութիւնը պիտի ըլլար, գայմագամը առանց հայութեան կամքը առնելու՝ իր սիրած հայը (Խարբերդցի Սիմոն Գարաճեանը) ընտրեց. ողջ ըլլալ միապետութիւնը և բռնապետութիւնը:

Թուրք պաշտօնեան շատ ծարպիկ է. գիտէ թէ որ պիտիներու ընտրութիւնը իրեն համար շահաբեր կըլլայ. ընդհանրապէս կընտրեն տգէտներն (թուրքերէն կարգաւ իսկ չը գիտցողներ. թող այլ ևս օրէնքը) բացառութիւնը հաղուագէպ են. հետեւաբար այդ ընտրուելու նրանիւնի արարածները գործիք կը դառնան թուրք գայմագամի, նախագահի և անդամոց ձեռք մէջ և լաւ է մէհիրճի և միջնորդ ալ կըլլան. ուրեմն, զիւրին է հետեցնել թէ հայ անդամ մը որչափ վնասակար կըլլայ իր գիրքին ու պաշտօնին մէջ և ուր կիջնէ աղութեան արժանապատուութիւնը. այսուհանդերձ շատեր կը փափաքին և մինչև իսկ կաշառք կուտան անդամ ընտրուելու համար. ընթերցողը գուցէ մտովի հարցնէ թէ ուրեմն ինչո՞ւ իրենց ղրամովը էութեամբ ստրկանալու գերը կը փափաքին ստանձնել. որովհետեւ իրենց կարճամտութեամբ, յետո՞ւ երբնիս փայտալուծած կը տեսնեն դաւն պաշտօնէից շարքին մէջ գտնուելովին. որովհետեւ կաշառքի փշրանքներն երբեմն իրենց կը մնան որովհետեւ հայ ժողովուրդին հանգէպ ակնածելի դերը մը ունեցած կը կարծեն: Գառն փորձերով յաճախ տեսնուած է, որ հայը շատ անգամ յուսախաբ եղած

է հայ անդամին դիմելով և կամ խօսքին հաւատք ընծայելով: Ահա հայ անդամոց վիճակը և կատարած դերը ի գիմաց հայ ժողովուրդին՝ ժողովներու մէջ գլխունելով հանդերձ:

Մինչ հոս խօսքս մասնաւորապէս հայ անդամներու վրայ էր. ասոնց վրայ աւելի ծանրացայ, որովհետեւ ի գիմաց հայութեանը ժողովներու մէջ աթուներ ունին. ասոնցմէ դուրս գտնուող հայ պաշտօնեաներն ևս գրեթէ միւսոյն մակարդակին վրայ կը գտնուին. առհասարակ պարտաճանաչութիւն չկայ. քիչ բացառութեամբ վնասակար հանդիսացած են հայութեան: Վայ այսպիսիներու վստահացողին:

ԳԻՏՈՂ.

ՆԱՄԱԿ ԿՈՎԱԿԱՍԻՑ

Բագու, 10 Մայիս, 1903.

Դեռ անցեալ ապրիլի 15-ից սկսած տեղիս սոցիալ-դեմոկրատ Կուսակցութիւնը սկսել էր բաց թողնել մի շարք թուուցիկներ հայերէն, ռուսերէն և վերացերէն լեզուներով, որոնց մէջ որոշակի բացատրուած էր իրենց արդարացի պահանջը բռնակալ կառավարութիւնից: Այդ թուուցիկներից մի բանիսը հըրաւէր էին կարդում հասարակութեան, որ գան աջակցին իրենց արդարացի պահանջին, որպէս զի մայիսեան ցոյցը բազմամարդ լինի և բռնակալ կառավարութիւնը հասկանայ, թէ այդ պահանջը ժողովրդային է, այլ ոչ մի բանի տաքագլուխ խռովարարների պահանջ: Վերջերս աչքի է ընկնում կառավարութեան նենգ բաղադրանքութիւնը հորեան աղգերի դէմ խռովութիւն սերմանել, իրար դէմ լարել, որպէս զի տեղացիք ըզբաղեն իրենց աղգային խնդրով և չմիանան սոցիալ-դեմոկրատների շարժումներին, սակայն Կուսակցութեան ընթացքը շատ վաղուց է հասկացել տեղական մտածող տարրը:

Կառավարութիւնը տեսնելով թուուցիկների հեղեղումն, գլուխը կորցրած՝ չէր իմանում ինչ անէր. մըտածեց, որ ինքն էլ գաղտնի թուուցիկներով բանւորներին հրաւիրէ իրենց դատը խաղաղ ճանապարհով վարելու համար և մատնացոյց էր անում, թէ մի շարք նոր օրէնքներ են մշակում բանւորների գրութիւնը բարոքելու և այլն: Սակայն շուտով իմացեց կեղծ թուուցիկների բուն աղբիւրը:

Ապրիլի 26-ի գիշերը յայտարարեց սոցիալ-դեմոկրատ Կուսակցութեան բոլոր անդամներին, որ 27-ի կիրակի առաւօտը կաղմ ու պատրաստ լինեն նշանակած հրապարակներում: Այդպէս էլ եղաւ: Կառավարութիւնը, թէև որոշ օրը չգիտէր, բայց, կիրակի լինելով, կարծում թէ էր, կիրակնօրեայ տօնավաճառից պի-

տի սկսելի ցոյցը, բայց ի զուր: Առաւօտեան ժամը 10 ին նախկին փոստատան դիմաց գտնուող հրապարակի վրայ պարզեց կարմիր դրօշակը և մի ակնթարթում մաքնիսի նման դէպի այնտեղ բռնեց 500-ի չափ ցուցարարներ, որոնք՝ ուռաններով ու Մարտիկօղը երգելով առաջ խաղացին դէպի Պարապետ կոչած հրապարակը, որտեղ սպասում էր իրենց աւելի բազմամարդ խումբը: Հէնց որ նկատեց թափօրի գալը, այդտեղ գտնւածները՝ դրօշակները պարզած՝ միացան միւսներին: Տեսարանը հետաքրքիր էր: Թափօրն առաջ շարժւեալ՝ նիկոլայեւսկի փողոցով, թնդացնելով օդը յիմալ կօրէի ցարի կառավարութիւնը, թող կորչի միապետութիւնը, կեցցէ սահմանադրութիւնը, կեցցէ սոցիալական ապստամբութիւնը, կեցցէ 8 ժաման աշխատանքը՝ բացահանութիւններով:

Թափօրը քանի գնում խտանում էր: Գուցարարների թիւը հասնում էր 2000—3000 հոգու, չհաշւելով հետաքրքիր հասարակութիւնը, որ խոնկել էր կոտորների վրայ, լուսամուտներում, փողոցներում: Ինչպէս տեսնում են, ասեղ ձգելու տեղ չկար: Հասարակութիւնը 10,000 ից աւելի կը հաշւէր: Քաղաքային ոստիկանները փախչում էին, որպէս փեսուրը քամու առաջ: Երբ որ յաղթական թափօրը հասաւ քաղաքային տան շինութեան, որի դիմացը գտնուող երաժշտական դրօշակը՝ ապաստան էին գտել թաղային ոստիկանները, թաքստից դուրս խուժեցին և ատրճանակներով ու մերկացրած սրերով յարձակեցան ցուցարարների վրայ: Գոյցին մասնակցող պատանիները, որոնք թիւը մի քանի հարիւրի էր հասնում, և որոնք մի առանձին շուք էին տալիս ցոյցին, լսելով ատրճանակների պայթիւնները և փայտերի հարւածները, սկսեցին յետ նահանջել, որին հետեւեց և հետաքրքիր հասարակութեան մեծամասնութիւնը: Այդ միջոցին տեղի ունեցաւ ընդհանուր ցուցարարների և ոստիկանների միջև, որի ժամանակ վիրաւորեցին 6—7 հոգի երկու կողմից: Այդ միջոցին վրայ հասաւ 250 ի չափ հեծեալօրը, նոյնչափ ևս ոստիկաններ, որոնք սկսեցին ձիերով մտնել հասարակութեան մէջ, հարւածելով աչ ու ձախ առանց խտրութեան հասակի և սեռի, մտրակների ծայրը հագցրած երկաթէ գնդակներով: Խլեցին երկու դրօշակներ, ձերբակալեցան 20 ի չափ մարդիկ, որոնց մէջ կային մի քանի պարսիկներ և կանայք: Գոյցին մասնակցում էին 100 ի չափ տեղացի պարսիկներ, որոնք սեղմում էին ցուցարարների ձեռքերը, ասելով՝ յՄենք եղբայր ենք, մենք միանում ենք ձեզ՝ ցարի կառավարութիւնը տապալելու: Չերբակալածների մեծ մասը անմեղներ են, որոնք հետաքրքրութեան համար էին գուրս եկել: Երեկոյին նոյն տեսակ ցոյցեր կըրկնւեցան, որոնց միջոցին խիստ ծեծ կերան մի քանի ոստիկաններ՝ զրանցից երկուսը մերձ ի մահ:

Մայիս 1-ին բոլոր գործարաններում գործադուլ տրին, տօնելով այդ օրը: Այդ բանն առաջին անգամն է Ռուսաստանում: Կառավարութիւնը ոչինչ չի կարողացաւ

անել: Մայիսի 6-ին, ցարի անհանափօղութեան օրը, որի անունով կոչւում է տեղիս 1-ամսեայ անապաճաւը՝ կառավարութիւնը վախից սովորական բացումը յետաձգեց յաջորդ օրւան: Չնայած որ տեղիս կոմիտէն նահանգապետին յայտարարել էր, որ այլ ևս ցոյց չպիտի անեն, այդուամենայնիւ կառավարութիւնը մեծ երկիւղ է կրում՝ թէ Մայիսի 14-ին, թագադրութեան օրը, մեծ ցոյց կը լինի: Բագուն այժմ՝ գտնւում է պաշարողական դիրքի մէջ: Չօրքեր են բերել թիֆլիսից և այլ տեղերից:

Մ—Ն.

Ալեքսանդրապօլ, 4 Օգոս. 1903

Մեր թշուա հայրենիքի զրուիւնը օր ըստ օրէ վատթարանում և ցաւերը բարդւում են: Դեռ մենք Ցած, կահայաստանի վերջերը չափաքած, դեռ նրա սարերի եւ ձորերի վրայ թափած 100 հազարաւոր անմեղ զոհերի արիւնը չը չորցած, ահա բացւում է մեր առջև մի անըսպանելի եւ խիստ վտանգաւոր կացութիւն այն է, — Ռուսաց միապետութիւնն էլ ձեռնարկում է այն քաղաքականութեան, որը կոչւում է հայաջինջ քաղաքականութիւն և որ կարծում էինք միայն Սուլթան Համիդին էր վերապահւած. ոսկայն այսօր տեսնում ենք առաջինը խիստ նախանձից բռնւած, ուզում է Համիդին պակաս թողուցածը ինքը լրացնել, բայց... բարի ախորժակ...

Ու այսպէս ցարի բռնակալ կառավարութիւնը, այս օրերս հրաման է արձակել մեր բոլոր եկեղեցական կալւածները զրաւել, յայտարարելով՝ ի հարկէ, լրբութեան հասած աներեսութեամբ, թէ հայերը պէտք եղած կերպով չկրնալով կառավարել նրանց, ինք կըստանան այդ պարտականութիւնը:

Խոր քաղաքագէտ լինելու կարիք չկայ, ըմբռնելու համար թէ, թշնամին (Ռուս կառավարութիւնը) եկեղեցիների նիւթականը ձեռք առնելով, տիրանում է և բարոյ յականին, այսինքն՝ նա՛ է որ այնուհետեւ պիտի լինի մեր հոգեկան-կրօնական պահանջներին գահացում տողը. բայց իրաւ, այսպէս է, եթէ չէ այս յայտարարութեան տակ ծածկւած է այն՝ որ մենք ընդգծելով անհանում ենք հայաջինջ քաղաքականութիւն:

Ու ահա այս հանգամանքն ու պարագան է որ, ահագին իրարանցում է առաջացրել Ռուսահայ բոլոր խաւերի մէջ և որի պատճառով ամեն տեղ հայ ժողովուրդը խիստ յուզւած է: Այնք է շեշտել, որ անկարելի է այլ ևս նրա համար հաշտել զրուիւն հետ և թոյլ տալ առանց բողոքի, որ լիբը թշնամին մուտք գործէ մեր զարեւոր սրբավայրերի մէջ ու դառնայ տէր և տնօրէն:

Ամբողջ հայութիւնը յանկարծակիի եկաւ այս յայտարարութիւնից ու անընդհատ մարդիկ զիմոււմ են իրար հարցնելով յիշ ի՞նչ անելու է. ամենքի աչքերը յառած էին Եւթիմիանի վրայ, ակնդէտ սպասելով թէ ի՞նչ

էր անելու Նշմիածինը: Վերջերս իմացուց, որ Նշմիածինը միանգամայն մեքենայ է ի կատար ածել Բարձրագոյն հրովարտակը, որ ներկայացած էր պրօֆուրօրի միջոցաւ հայոց արեգարդ Հայրիկին: Բացի սրանից վեհ. Աթոռիկոսը այս մասին հաղորդել է հայոց բարձր շրջաններին, յայտարարելով, որ Հայոց Հայրիկը հրաժարուած է կամովին ոտորագրել այն հրամանը, որ ներկայացած էր իրեն: Եւրջ բարդութիւններ սպառնում են:

Այս առթիւ յայտնում ենք, որ Ալեքսանդրօպօլը մի շատ օրինակելի և խրախուսիչ հրապարակային ցոյց արեց և հետ թէ ինչպէս:

Հայրիկը Անահնի վանքից վերադառնում էր Նշմիածին, որպէս զի զնայ պատասխան տայ այդ հրովարտակին: Մեր քաղաքի եռանդուն երիտասարդ ոյժերը կարողացան թէ՛ համոզելով և թէ՛ ի հարկին բռնաբեկելով 5 ռուպէի մէջ բոլոր քաղաքի խանութները փակել տալ: Կատարի գանգահարութիւնը, որ արտակարգ ապաւորութիւն էր գործում ամբողջ քաղաքի հայութիւնը հաւաքեց Հայրիկի շուրջը: 8—10 հազար մարդ միաբերան աղաղակում էին յորդոցում ենք անխրատութիւնների դէմ, չենք յանձնի կամովին մեր եկեղեցին, թո՛ղ Նշմիածինն ևս բողոքի, թո՛ղ չի հնազանդի այդ աւագակային հրամանին: Եւ Նշմիածինը Ոստիկանութիւնը դողում էր և անկարող զօգել ժողովւորը, զօրքեր հրաւիրեցին, բայց բարեբաղդաբար ուշացան և երբ եկան՝ արդէն ժողովւորը Հայրիկին ճանապարհել էր և ապա ոստիկանական պաշտօնեաներին մի լաւ թակելուց էլ յետո՛յ ցրում է Հայրենիքի նսիրած երգերի և ցոյցի բուն խանգաւազութեամբ:

Չերբակալած և բանտարկած է Հայկ Ամատունի անունով մի ինտելլիգէնտ անձ:

Երևանից այստեղ են հասել հապճեպով նահանգապետի օգնականը, պրօֆուրօրը իւր օգնականով, կարեւոր գործերի առանձինն քննիչը՝ իշխան (աւագակ) Գալիցիին կողմից, դատաւարական պալատի քննիչներ, գլխաւոր պրօֆուրօրը և 8 հատ ժանդարմի կապիտաններ:

Այս բոլորը թափուած էին Ալեքսանդրօպօլ ինչպէս ագոսանները լէշի վրայ: Հայ ժողովուրդը այլ ևս չի սարսափում այդ մարդկանցից, որովհետեւ վճռել է ամեն միջոց գործ զնել իւր վարէնը իրաւունքները պաշտպանելուն:

Այս քանի օրերս խիստ քննութիւններ են կատարւում, քաղաքի մի շարք առաջաւոր անձերը ցուցակագրել են և հաւանական է որ գործին երեսն ուղած կերպարանքը տալով՝ շատերին աքսորեն: (Այժմ լոյս չօփօք վերքիմիայի, սեւ նպատակին հասնելու վրայ է):

Հայ ժողովուրդի հրապարակային այս ամենաարդար բողոքը Ռուս պետութեան խղճից ճանաչւած և ընդունւած է որպէս հայկ. ցոյց: Իրողութիւնները եղածից աւելի սուացնում են անխիղճ հալածանքներ ձեռք առնելու համար: Ժամ առ ժամ մեր դրութիւնը վատանում է, խիստ խուզարկութիւններ են սկսել առ հասարակ:

Ահա՛, այս է իրերի պրօթիւնը: Լուում է, թէ Երևանում խիստ յուզում է առաջ եկել եւ ցոյց եղել:

ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Այս տարւոյ ընթացքում Ռուսաստանում պատահեցան մի շարք բանւորական խլրտումներ, որոնց նըպատակն է ձեռք բերել քաղաքական—առավարական սահմանադրութիւն և տնտեսական բարենորոգումներ: Միւս կողմից ռուսական բռնակալ կառավարութիւնը դործադրում է տմենականացի և տմարդի միջոցներ կասեցնելու համար այդ յեղափոխական շարժումները և մարելու այն յեղափոխական ոգին, որ այսօր տարածւել է ահագին կայսրութեան ամեն անկիւնները և ըստպատում է պայթել շատ աւելի զօրաւոր ոյժով, քան ամեն տեսակ այլ և այլ ռուսներ: Բանւորների յեղափոխական շարժումներ Ս. Պետերբուրգում, Նիկաթերի—Նոսրալում, Ռոստովում, Թիֆլիսում և այլն. գիւղացիների ապստամբական խլրտումներ Նարիովի, Պոլտովոյի և Սարատովի նահանգներում. ռուսնորական շարժումներ ամբողջ կայսրութեան մէջ. վերջապէս քաղաքական ըստպանութիւնների փորձեր կառավարութեան բարձրաստիճան անձերի դէմ — այդ բոլորն այսօր դարձել են յեղափոխական զէնքեր Ռուսաստանի միլիտանոր հասարակութեան և ժողովրդների ձեռքը: Կառավարութիւնը պատասխանում է դրանց անպատմելի ճնշումներով, սքողորելով, բանտարկելով, ապստամբներին կախաղան հանելով, վերջապէս կոտորածներով, ինչպէս Զատուստում և ապա այն սոսկալի ջարդով. որ նա իր զինւորների և իր ծառաների խօթքով գրգռւած ամբոխի ձեռքով կատարել տւեց Նիշնեվում հրէաների դէմ: Այս վերջին կոտորածը մասնաւորապէս, իր գաղաւթութեան, իր լարած խարդախ որոգայթների ու թիրաքիայի աչքին իսկ նախանձելի տմարդութեան պատճառով առաջացրեց ամբողջ քաղաքակիրթ աշխարհի վայրոյթը, որին թարգման եղան մամուլը և բաղմամբ միտինգներ:

Ռուս յայտնի գրող Մաքսիմ Գորկիյ այդ ջարդի մասին վերջերս գրեց մի գեղեցիկ էջ, որով հաւատարիմ թարգման է հանգիստնում բոլոր ռուսահպատակ ժողովրդների արդար զայրոյթի և բողոքի ընդդէմ ռուս դէպօր կառավարութեան, որի գոյութեան օրերը, թըւում է, այլ ևս հաշւած են: Այստեղ թարգմանում ենք կոտորներ Գորկիյի այդ էջից:—

»Մի քանի տարիից ի վեր մեր երկերը աւելի և աւելի սռէպ դառնում է թատրայնպիսի գէպերի, որոնք նրան բերում են անպատուութիւն: Ամեանանպատիւ դէպքը սակայն, մի դէպք, որ ներշնչում է սարսափ, ամօթ ու դայրոյթ, դա՛ զարհուրելի կոտորածն է, որին ենթարկւեցան Նիշնեվի հրէաները:

»Մարդիկ, որոնք իրանց կարծում են քրիստոնեայ, մարդիկ, որոնք իրանց ներկայացնում են իբրեւ հաւատացողներ Աստուծոյ, գթոյ և բարութեան Աստուծոյ, այդ մարդիկը հէնց այն օրերին, որ ներկայ էին

իրանց Աստուծոյ յարութեան տօնին, սպանում են երեսնաներին ու ծերերին, բռնաբարում կիներին, թալանում ու տանջում այլ մարդկանց, որոնք պատկանում են այն ժողովրդին, որը նրանց տւել է ֆրիստոսին:

«Որին պէտք է մեղադրել այդ ստոր ոճիրի համար, որը մեզ, բոլոր Ռուսներն, ճակատին դրոշմում է անամոթութեան դրոշմը, մի դրոշմ, որ դարերը չեն կարող ջնջել խաւարի այս երկրի տանջալի էջերից:

«Անարգար կը լինէր և միանգամայն շատ դիւրին միջոց մեղադրել այդ ոճիրում «ամբոխին», որը կոտորել է հրէաներին. այդ «ամբոխը» միայն մի ձեռք է: Իսկական յանցաւորը, դա ուն հասարակաց այլասերւած ու փչացած կարծիքն է, որը մղել է «ամբոխին» դէպի կողոպուտ և սպանութիւն...

«Կիշիննի վի անամոթ ու զարհուրելի դէպքերի համար նոյնքան յանցաւոր է ռուսական կրթած գառը, ողբան և նրանք, որոնք սպանութիւններ ու բռնաբարութիւններ են արել: Նա յանցաւոր է, որովհետեւ ոչ միայն չէր պաշտպանում նրանց, որոնց սպանում էին, այլ ընդհակառակը՝ հաճոյքով դիտող էր կոտորածների, և մանաւանդ յանցաւոր է նրա համար, որ, երկար տարիների ընթացքում, նա թոյլ է տւել որ մարդկային ցեղի թշնամիները իրան փչացնեն: Այդ թշնամիները վաղուց ի վեր ձեռք են բերել բծնողների և սրտութիւնը գովաբանողների արհամարհելի փառքը, և դրանց անուններն են՝ Ալէքսէյ Սուփօրին, Ալիսոր Բուրնին, Վասիլիյ Վէլիչկօ, Սէրգէյ Շարապով, Վիսսարիօն Կոմարով, Պիատկովսկի, Կրուչեվսն և ուրիշներ ևս:

«Ահա Կիշիննի ոճրի իսկական հեղինակները, որ մեզ ձգում են ամօթի ու սարսափի մէջ:

«Այն բոլոր սոսկալի ածականների վրայ, որ վաղուց ի վեր կցում են այդ զգուշի մարդկանց անուն, պէտք է աւելցնել նաև մէկ ածական, բոլորովին արժանի նրանց, սպանողների եւ կողոպտողների գրք. գրառուներ:

«Այն կեղծապաշտները, որ Աստուծոյ անունն են տալիս և անբարոյականացնում են ռուսաց հասարակութիւնը, սերմանելով ռիս դէպի հրէաները, դէպի հայերը և դէպի ֆինլանդացիները, հէնց այս րօպէին իրանց գրգռումների զոհ եղածների դիակների վրայ թափում են ստոր և անամոթ դրապարտութիւնների հեղեղ. նրանք շարունակում են այդպիսով ապականել և այլասերւման հասցնել ռուսական անտարբեր հասարակութեան զգացումներն ու միտքը:

«Ամօթ այդ չարանենգ մարդկանց և թո՛ղ խղձի խայթի կրակը լափէ նրանց նեխած սիրտը, որ վառւած է ծառայական փառասիրութեամբ և լի է փորձերի շողորթութեամբ ոյժի առաջ:

«Նոյն այս րօպէին ռուսական հասարակութիւնը, որ անպատիւ կերպով խոնարհւել է և ընդունել այդ ցածների գրգռումները, պարտականութիւն ունի ապացուցանելու, որ նա լիովին փչացած չէ մտքի այն պոռնիկների ձեռքով, որ նա համակարծիք չէ դէպի ըս-

պանութիւններ և բռնութիւններ մղողները: Հետ որ և նրա մէջ դեռ մնացել է մարդկային զգացման մի նշոյլ:

«Ռուսաց հասարակութիւնը Կիշիննի դէպքերից իր վրայ ընկած ամօթից գէթ փոքր-ինչ ամբելու համար իր խղձմտանքը, պէտք է օգնութեան ձեռք մեկնէ հրէայ որբերին ու կողոպտածներին, հրէայ ազգին, որ մարդկութեանը տւել է այնքան արդարեւ մեծ մարդիկ և որը, հակառակ իր սարսափելի դրութեան և այն ճնշման, որի տակ գտնւում է նա, շարունակում է դարձեալ ստեղծել և տալ մեզ ուսուցիչներ ճշմարտութեան և գեղեցկի:

«Այսպէս, դուք ամենքդ, որ չէք ուզում հանդիսանալ ծառաների ծառաներ, որ դեռ պահպանել էք ձեր մէջ մարդկային արժանապատեութեան մի կայծ, օգնութեան հասէք հրէաներին:

«Այն մէկը, որ իրան անւանում է մարդ այդ բառի ճշմարիտ նշանակութեամբ, չը պիտի լինի ո՛չ յոյն և ո՛չ հրէայ, այլ միմիայն մարդ»:

ԱՐԵՎԵԼԵՆԸ ՀԱՐՅԻ ՇՈՒՐՋԻ

Մեր նախկին յօդուածներում շարունակ այն միտքն էինք արծարծել, որ Բուլղարական ժողովուրդը՝ իբրև ցեղակից եւ դաւանակից Մակեդոնական հերոս ժողովրդի, չէ կարող անտարբեր աչքով նայել կատարող նախճիրներին: Գիտենք նաև, որ ֆերդինանդ իշխանը, հակառակ լինելով Մակեդոնական հարցին և Բուլղարական ազգի համակրական դիրքին, իւր հարազատ ժողովրդի ցասումից ճողոպրելու համար, առժամապէս երկրից հեռացաւ՝ ամառանոց գնալու գեղեցիկ պատրուակի տակ... Ամառն էլ՝ անցաւ, և Մակեդոնական հարցը հրապարակ է եկել առժամ աւելի քան երբէք ոպառնալին կերպարանքով և բարձրագոյն կամակորութեամբ: Ի՞նչ քանի ամսեայ ըստ երևոյթին զինադադար անելուց յետո՛յ՝ Մակեդոնացին որբել է իւր սուր ու սուսերը, և բուռն ցասումով նետուել կոուր առպարէզը: Հարիւրաւոր, հազարաւոր Բուլղարացի զանուորներ և սպաներ օգնութեան ձեռք են կարկառում իրենց եղբայրակիցներին, որոնք, ազատութեան վեհ գաղափարով տողորում՝ ահա քանի ամիսներ շարունակ կատաղի կոխ են մղում Սուլթան Աբդուլ Համիդի հարիւր հազարաւոր կանոնաւոր զօրքերի և բաշխողականների դէմ:

Սկզբում կարծուեց՝ թէ ընկճուեց, թուացաւ անոք անօդնական Մակեդոնացին: Պահ մի կարծուեց, թէ յուսահատութեան ու լքման զգացմունքից խորապէս յաղթահարուած՝ վճռել է հաշտուել իւր ճակատագրի հետ և կրել արինարբու թշնամու ծանրակուռ շղթան: Սակայն այսօրուայ իրողութիւնները սքանչելի և պերճախօս ապացոյցներ են, թէ այդ բոլորը փոթորկից առաջ թաղաւ:

բող խաղաղութեան են նման: Այսօր փոթորիկը բոլոր է, պայթել է ապստամբութեան որոտը աւելի քան երբեք ուժգին եւ կատաղի: Եւ ահա, մինչդեռ որանից ամիսներ առաջ՝ Մակեդոնական ժողովուրդը՝ ապստամբութեան նախնական քաղցնեցում միմիայն փոքրաքանակ եւ մանր խումբերով էր մտածում իւր պաշտպանութեան մասին՝ ընդդէմ տաճկական խառնիճաղանձ բաշխողութեան եւ կանոնաւոր զօրքերի, այսօր, նորանոր ուժերով, ուղղական իշխող պատրաստութեամբ ուժեղացած եւ բուլղարական ցեղակից ժողովրդի անմիջական օգնութեամբ արդէն խիզախ յարձակումներ է գործում իւր պարտքը թշնամու վրայ եւ ծանր կորուստներ եւ կոտորածներ պատճառում նրան:

Այս վայրկեանը նշանակալից է եւ վճռողական: Մակեդոնական շարժման այս երկրորդ ժամանակաշրջանը առնու է խիստ եւ ծանր կերպարանք, Մեծ Պետութիւններին մտածել տալով, որ ու է ֆօօրմնեբի ծիծաղելի աչքակապութեամբ այլ եւս միանգամայն դժուար կը լինի ընդվզումի վրոջը բարձրացրած հերոսական ժողովրդի ապստամբական խոյանքների առաջ պատնէշներ դրնել: Ահա եւ բուլղարական սեփական եւ տաճիկ տէրութեան միջեւ բռնկուելից պատերազմի անխուսափելի վերտանգը, չնայած որ Մեծ Մարզասպանի երթանուոր սանիկ ֆերդինանդ իշխանը «ազնիւ» խօսք էր տուել իւր հայրախնամ բարեբարին՝ խաղաղութեան եւ զուգման միջպահել իւր ժողովուրդը Մակեդոնական շարժումների ժամանակ: Ահա եւ սլաւոնական մի ուրիշ՝ սերբիական ժողովուրդ, որ աչքերը լայն բացած յարմար առիթ է ըստպատում իւր ցեղակիցներին զօրավիգ կանգնելու համար: Եւ այս բոլոր հանգամանքները առանց ազդեցութեան չեն մնալ հրի եւ սրի մէջ տոչորտող, թիրեաց ահազանգոտ թնդանթների հաբուածներին ենթակայ դիպագնական ժողովրդի վրայ: Սարափելի եւ զարհուրելի են այն կոտորածները, կողոպտումները եւ բռնաբարութիւնները, որոնք այսօր կատարուում են Բալքանեան լեռնաղջուտ, խաղաղ բնակչութեան վրայ: Կոտորածներ ու սարսափներ, որոնք քիչ է մնում պահ մի մուռնցնել տան տարիներ առաջ Հայաստանում կատարող քստմեղի խողխողանքները եւ սպանութիւնները: Ամբողջ գիւղեր, ավաններ եւ քաղաքներ կրակի, հրդեհի եւ սրի ճարակ են դառնում: Հարիւրաւոր եւ հազարաւոր անպաշտպան գիւղացիներ, առանց սեփական հասակի խտրութեան, ամենաանբերեալայելի գաղանթութիւնների եւ բռնութիւնների են ենթարկուում, բայց չնայած սրան, այնտեղ՝ անմերձեանքի լեռներէ կատարներից՝ ապստամբական անվեհեր խումբը մեղք գնդակի կարկուտ է թափում իւր թշնամու գլխին, մերթ հակառակորդի շղթան պատառելով տառաջ եւ սլանում, յետեւից զիականքի կոյտեր թողնելով:

Հատ պարզ է, որ այս բոլորի հանդէպ բուլղարական կառավարութիւնը անտարբեր աչքով չէ կարող նայել: Նա արդէն սպառնում է պաշտօնապէս դուրս գալ չեզոքութեան վիճակից եւ գործնական քայլեր անել: Մեծ Պետութիւններին ուղղած մի զրուցեալ բողոքում է նա տաճիկ կառավարութեան անորակելի խզմութիւնները, բռնութիւնները եւ հրէշային կոտորածների դէմ, նոյն ինքն

բուլղար ժողովրդի վերաբերմամբ, մատնանիշ անելով միաժամանակ, որ միւս կողմից ահագին ռազմական պատրաստութիւններ է տեսնում, յանկարծակի ներս խուճելու եւ բուլղար տէրութեան վրայ յարձակում գործելու զիտաւորութեամբ: Ապա, կոչ է անում նոյն պետութիւնների մարդասիրական եւ արդարասիրութեան զգացմունքներին, որպէս զի տաճիկ կառավարութեան փոքր ինչ զուպեն — օրպէի միաժամութիւն — մի ամբողջ քրիստոնեայ ժողովուրդ վերջնական բնաջնջումից զերծ պահպանեն, Բարձր Դրանն ստիպեն, որ յետ կանչէ իւր զինուորական արտասովոր պատրաստութիւններն եւ ոյժերը, եւ եւն, միամիտ պահանջներ ու գալլի գլխին կարգալից շարականներ....:

Այսպէս է դրութեան ընդհանուր պատկերը: Վաղն էլ գուցէ պատերազմ պաշտօնական, եւ ով գիտէ, 20-րդ դարի ամենահետաքրքիր եւ նշանակալից իրողութիւններից մէկի նախերգանքը:

Ն Ի Ի Ր Ա Տ Ի Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

«ԸՆԿԵՐ» Մ—դի գանձարանում ստացւել են հետեւեալ գումարները —

ա. 1902 թ. հոկ — դեկ. ամիսներում վարչ. անդամների ամսավճարները 43 և 50 կ, Ագատասէր խ. 8 և 50 Հայդուկ խ. 14 և 75 կ, Դաւիթ-Բէկ խ. 15 և, Գալլ-Վահան խ. 24 և, Սամուկ խ. 25 և, Մարտիկ խ. 2 և, նըւէր X-ից պ. կորինի միջոցաւ 3 և, նւէր X-ից պ. կարօյի միջ. 3 և 9) կ:

բ. 1903 թ. յունվ. — մայիս վարչ. անդամ. ամսավճարը 64 և 50 կ, Ագատասէր խ. 20 և, Հայդուկ խ. 26 և, Դաւիթ-Բէկ խ. 22 և 5 կ, Գալլ-Վահան խ. 19 և, Սամուկ խ. 28 և 50 կ, Սիսեան խ. 32 և, Թորոտ-Ծառուկեան խ. 45 և 75 կ, Ժիրայր խ. 20 և, Տաթև խ. 25 և 80 կ, Հնհէր խ. 24 և, 90 կ, Աւօ խ. 10 և 50 կ, Մինաս-օղլի խ. 7 և 50 կ, Երեկոյթներից՝ ա. 1902 դեկ. 27-ին գումարակներ 44 և 85 կ, բ. 1903 մարտ 16-ի 170 և 67 կ, պ. Ահրիմանի հրատարակած չնչ. գործիչների պատկերների վաճառումից 25 և, օր. Թ. Ա. -ի գործած յՈՂԻ Հայաստանի պատկ. վիճակախաղից 50) ու, Նւէրների պ. կորինի միջոցաւ 4 և 60 կ, պ. կայծի միջոցաւ 50 կ, պ. Բանուրի միջոցաւ 1 և 50 կ, Թորոտ-Ծառուկեան խմբի անդամներից 4 և, պ. Բ. Օ. -ից պ. կայծի միջոցաւ 5 և, Ընդհ. գումար 792 և. 27 կ:

«ՄՈՒՐԱԳ» Մ—դի գանձարանում ստացւել են 1903 Յունվ. 1 — Յունիս 1 —

Բագրատունեաց խ. 7 և, Արհեստաւորից նւէր 5 և, Անահիտ խ. տօնածառից 250 և, Բագրատունեաց խ. 7 և 50 Վարչական Երեկոյթից 223 և, վարչութեան անդամներից 5 և, Վան խ. 24 և, Արհեստաւորից նւէր 10 և, վարչ. Երեկոյթից 51 և 25 կ, Բագրատունեաց խ. 9 և, Արհեստաւորից նւէր 5 և, Արհեստաւորի միջ. հանգանակած 2 և 8) կ, վարչութեան անդամից 5 և, Անահիտ խ. Երեկոյթ. 101 և Անահիտ խ. ձեռագործներից ծախած 12 և 35 կ Բագրատունեաց խ. 8 և խնջոյցից 23 և 50 կ. Երեկոյթի մնացած իրերից 2 և 50 կ. Մերվի Ագատ խ. 20 և. Ասխաբադի «Տիգրան» խ. 2) և. Կրստնաուղակի «Հերոս» խ.

12 ու. 70 կ. պ. վաճառեց յետ ստացած 5 ու. Մարտիկից
12 ու. վաճառեց 20 ու. Զրաբերդից 8 ու. Ծիածանից 4 ու.
20 կ. Տարօն խ. 6 ու 7 կ. Ընդհ. գումար 365 ու 50 կ.

«ԵՐԵՍԻԱՆՈՐ» Մ-դի գանձարանում ստացել է
Յուլիսի ա. խ. 16 ու 29 կ. Յուլիսի բ. խ. 19 ու 45 կ. Օ-
րօրան խ. Սուրճակի միջոցով 14 ու 90 կ. Ժօնի տանից
6 ու, Հիլերից 8 ու 52 կ. Սիրիւրի տանից վաճարի միջ.
2 ու 66 կ. Թ. Ա. Ժօնի միջոցով 2 ու 23 կ. Տ. Կ. Գում-
շուկի միջոցով 4 ու. Տ. Կ. Ժօնի միջոցով 2 ու 95 կ.
Թ. Զ. 6 ու 50 կ. Ա. Վ. 2 ու. Հ. Ծ. 2 ու. Մ. Տ. Ծ. 2 ու 5
Ծանդան առթիւ տիրիւններից և պարոններից Հիլերից
և Զումշուկի միջ. 22 ու. Ընդհ. գումար 122 ու.

«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆԻ» Մ-դի գանձարանում
ստացել են.—

Սատուն խ 18 ու. Հրաչեայից 20 ու. «Չէյթուն» խ.
3 ու. 80 կ. «Ջուխտակ—Խաչ» խ. 44 ու. «Սատուն» խ. Երկրորդ
անգամ 116 ու. Երկրորդից 12 ու. 80 կ. «Չէյթուն» խ. Երկրորդ
անգամ 1 ու. 60 կ. «Մայր—Հայաստան» խ. 38 ու. Վ. Աղ—ից 5 ու
«Ազատութ» խ. 93 ու. «Մայր—Հայաստան» խ. զինուորներից ներք.
10 ու. Հայ—Սոցիալիստից 50 կ. «Ջուխտակ—Խաչ» խ. զինուորնե-
րից ներք. 8 ու. որ ներքիւ են Զորքար 1 ու. Միւլիւ, Պտուր, Դաս-
պար. Խորշուռ, Եղօ. Աղաւ, Խաչօ, Յովհաննէս, Սեդրակ. Դէ-
որդ, Կարապետ. Բամալ. Շէկօ և Սարգիս 50-ական հոգէից
«Մայր—Հայաստան» խ. 20 ու. «Մայր—Հայաստան» խ. 30 ու. «Աղբիւր»
խ. 10 ու. 60 կ. «Մագնիս» խ. 4 ու. 80 կ. Դարբերից 1 ու. «Սատուն» խ.
22 ու. «Ազատութ» խ. ա. տանիներից 9 ու. բ. տան. 11 ու. եւ գ. տան.
ն. 10 կ. Վրէժ խ. 9 ու 75 կ. Ջուխտակ—Խաչ խ. 30 ու. Սատուն խ. 5 ու 50 կ.
Սոցիոց. Դաւարից, Երանտից և Մանուկից 50 ու. Դումար 595 ու. 45 կ.

ՌՈՒՍՃՈՒԲԻ Մ-ը 1902 Յունիս 1—1903
Յուլիս 31-ը ստացած է հետևեալ գումարները.—

Միւլիւ խ.— Փայլակ 26 լու, Միւլի, Կայծակ, Հրաչ. Վիթ-
իւր, Արմատիւր, Ազատութ, Սատ, Արտուազգ, Հրաչան, Աւետիկ
Բմբիշ, Շաւիշ, Միւրոյ, Ժիւրայր 13-ական լու, Ժառ, Առիւծ, Վը-
սեմ, Բոնի, Տրիստի, Անարիւ, Գորտոր 12-կն լու, Արծիւ, Ա-
րամ, Դազնիկ, Ռօման, Վիշապ 11-կն լու, Բազարատ, Կրակ, Ժնր
7-կն լու, Շաւարշ 6, Ազատակ 5 ու. Ներսէս, Սիմիմ 4-կն լու
Թագ, Կարիմ 3-կն լու, Շէրոյ, Ամա 1-կն լու, Բորմուս 50 ո-
ւ. Ռօմի խ.— Տարաւի 4 լու, Երկաթ, Թռչնիկ 2 եւ կէս-
կան լու, Աղանի 1 եւ կէս, Բագէ, Զինուած 1-կն լու Շահէն 50 ո
ՄՈՒՐԱՅ խ.— Լեռ 8 լու, Շաւարշան 6, Վարուժան, Լոյս 5
Բաշայր, Ուրուր, Վաշէ 4-կն լու, Վազր, Հանք 2-կն լու: Լճ-
ուրն 8 խ.— Դրօզ, Գնդակ 14-կն լու, Մուլժ 10: Հանգանակու-
թենէ— Արմանակ, Թօ, Մ. Գ, Թիւ 1200 20-կն լու, Դրօզ 10 լու
Նուագածու, Սէկէն, Ծ. Ս, 5-կն լու, Միւլի, Փայլակ, Կայծակ, Ներ-
սէս, Վիթիւր, Արմատիւր, Անարիւ 15-կն լու, Միւրոյ 16, Ազա-
տութ, Հրաչ 8-կն լու: Ռմ 1 լու:
ՈՒՐՈՒՄԱՅԻ խ.— Մ-դէն 50 ֆ.—նուրիւս են Արծիւ 5 ֆ Մոզ
4, Զէրբէգ, Դուռ, Դան, Ներքի 3-կն ֆ միւլիւ, Երկաթ, Սեմ, Ժիւրայր
2-կն ֆ, Հ. 1 ֆ: Դումար 757 ու. 50 անդիւ:

«ԲԱՆԻՈՐ» Մ-դի գանձարանում մինչև 1903
թ. Յունիսի 1-ը ստացել են.—

Պ. Սագունուց Աւետիկ արդիւնը 83 ու, Արշաւի Կամու-
րից Աւետիկ փոխարէն 16 ու, Սիրաբից Աւետիկ արդիւնը 36 ու
50 կ, Մամիկոնից տօնածառի արդիւնը 51 ու 50 կ մի երկրորդից
370 ու, Մոզակից ներք 30, Որոտումից 5, Բարսեղից նօ 18 ան-
դրորագրով 12 ու 50 կ, Հրաչատի մի երկրորդից 50 ու, մի ընկեր-
ւորից 100 ու, Սագունու հին ապակի 90 ու, եւ սեպտ, ամ-
ստիւմ. 5 ու, Ժնրուի Արքակից ներք 5 ու, Անտրնիսից, Արշա-
ւի Կամուրից, Սիրաբից, Մոզակից սեպտ-ամսով 10-կն ու
ն.—եմսց Սարգսից ն. 11 անդոր. 5 ու, Սագունուց հոկտ. ամս-
5 ու, Մոզակից 10 ու, Մամիկոնից սեպտ. եւ հոկտ. ամս. 5 ու.
Փոխան Մ.—նից նօ. 11, 12, 15, 16 անդոր. 37 ու. 50 կ, Արշաւի
Կամուրից հոկտ. ամս. 10 ու, մի խաւն երկրորդից 47 ու, Սիրա-
բի հոկ. ամս. 10 ու, Սագունու նոյ. ամս. 5 ու, Արշաւի Կամու-
րի նոյ. եւ հոկտ. ամս. 20 ու, Սագունու հոկտ. ամս. 5 ու, Սիրա-

ւրի եւ Մոզակի նոյ. ամս. 10-կն ու, նօ. 15 անդոր. ամս. 3 ու
50 կ. նօ. 25 անդոր. ամս. 5 ու, Սագունու յոկտ. ամս. 5 ու, Ար-
շաւի Կամուրից եւ Նուագատակից տոնածառ 40 ու, Արշաւի
Կամուրի եւ Մոզակի հոկտ. ամս. 10-կն ու, Սիրաբի Գեկտ-
եւ Յունի. ամս. 20 ու, Դ.—ից ներք 100 ու, Վարպետից ներք 3 ու
Արշաւի Կամուր 5 ու, Արամից հին ապակի 7 ու, Բալասիա-
նու մի երկրորդից 60 ու, Մամիկոնի նոյ. եւ հոկ. ամս. 7 ու, Ա-
շուր Երկաթ խ. Սագունու միջ. Հանգանակած 40 ու, Սագունու
փետ. մարտ եւ ապրիլ ամս. 15 ու, Մարմար Մարմարեանից նօ
7 անդոր. 40 ու, Որոտում խ. 30 ու, Մոզակից Մայիս ամս. 5,
Կորիւն խ. Հրաչատի եւ Միւրոյի միջ. ներք 48 ու, Կամր խ. ամ-
15 ու, եւ վիթ. 21 ու, Մոզակի Յունիս ամս. 5 ու, Աշուր Երկաթ
խ. Ապր. Մայիս եւ Յունիս 50 ու, Մ.—ից 12 ու. 20 կ, Որոտում խ-
12 ու. 50 կ, Կամր խ. 16 ու, Մոզակի Յուն. եւ Օգոս. ամս. 10 ու
Ազատութ խ. ամս. 23 ու, Հին Զինուորից 3 ու, Մոզ. սեպտ. եւ հոկտ
ամս. 10 ու. Սլար խ. 9 ու. 50 կ. Ազատութ խ. երկի. 150 ու, Աշուր
Երկաթ խ. 29 ու. 50 կ. Սլար խ. եր. 90 ու, նօ 7 անդոր. 2 ու. 50 կ
Ազատութ խ. ամս. 43 ու. 70 կ, եւ վիթակախաղից 17 ու. 30 կ. Սլ-
ար խ. երկի. մսացորդ 30 ու, Վրէժ խ. հոկ. ամս. 14 ու, Ազատութ
խ. 15 ու, Կամր խ. 5 ու, Օղակ խ. հոկ. 10 ու 50 կ. Վարշ. երկի. 315 ու 34
Օղակ խ. Աւետիսի փող 17.1 ու. Սլար խ. 125 ու. 2 կ, Գ. Մանի եւ
Հակի Արմանից Աւետիսի փող 5 ու, Հրաչատ եւ Մամիկոնից 27 ու 90 կ
եւ Պայթուցիկ խ. 6 ու. 50 կ. Վրէժ խ. երկի. 137 ու, Պայթուցիկ խ.
Յունի. ամս. 13 ու. 50 կ, Հրաչատից Հնէ. գոր. 15 նկարից 15 ու, Սլար
խ. երկի. 80 ու, Մամիս խ. Յունի. ամս. 16 ու, Աշուր Երկաթ խ.
Ազատութ եւ Մոզակի միջ. 25 ու, Ազատութ խ. հոկ. ամս. 5 ու 15 կ
եւ յոկտ. ամս. 16 ու, Աշուր Երկաթ խ. հոկ. ամս. 40 ու, Կարօյից ներք 60
ո, Օղակ խ. յոկտ. ամս. 5 ու 50 կ, Հրաչատից Հնէ. գոր. 32 նկարի փ
16 ու. Ազատութ խ. 10 ու, Սիւնիս խ. 9 ու 30 կ, Վարշ. ու երկի. 140 ու
12 կ, Եղանդ խ փետր. ամս. 13 ու, Կամր խ 2 ու, Սլար խ 27 ու. 40 կ,
Վրէժ խ յոկտ. ամս. 13 ու 50 կ, Ազատութ խ երկից 100 ու 80 կ
Հրաչատ Կամուրի ծնորով զանաւոր ապրանքի փող 20 ու, Կուսակ
Պատ 11 նկար 7 ու, 1900ի նանգ. 19 տոմսերից 8 ու 50 կ. Վրէժ խ ամ
փետր-յունիս 56 ու, Ազատութ խ յոկտ-մայիս 16 ու, Աշուրեան խ-
փետր-Օգոս 63 ու, Հաւրանի Թուր մարտ-ապրիլ 12 ու 50 կ, Աշուր Եր-
կաթ ամս-սեպտ 44 ու. 50 կ, Մամիս փետր-մայիս 10 ու, Սիւնիս փետ-
յունիս 44 ու 40 կ. Շամիլ յուլիս 8 ու 60 կ. Դումար մարտ-յուլ 31 ու 10 կ
Սլար յունիս 12 ու, Ազատութ փետր-սեպտ 87 ու. 70 կ, Օղակ Մարտ
յունիս 49 ու 20 կ, Պայթուցիկ փետր-յուլիս 37 ու, Չէյթուն օգոս եւ
սեպտ. 14 ու, Գայլ վաշտի Մայ-Յուն-Սեպտ 36 ու, Աշուր Արտուակ մի
ամս. 3 ու 90 կ, Հայրուկ յուլ-սեպտ 17 ու, Կալիթ Ռէգ յոկտ-սեպտ 42 ու
72 կ. Գ. Սիրաբից ամս-յուլ 20 ու, նանգ. Թեթիլ նօ Հանգանակած
25 ու 74 կ. նոյնի նօ 68 28 ու, Աշուրեան խ. երկի. 27 ու, Սլար խ. ե-
րկից 63 ու 18 կ, Մամիս խ. երկի. 45 ու, տոկոս 10 ու, Կամր խ
5 ու, Բազարատունիաց խ. փետր 15 ու 50 կ, Կայծ խ. 50 ու, Բազարատ.
խ. միւրակ. արդիւնը 10 ու, Գ. Ե-ից 3 ու, Արտուազգից 5 ու. Պայ-
թուցիկ խ. օգոս ամս. 7 ու, Սլար 1 ու, Յիշատակ 6 ու 20 կ, եւ սեպ
ամս 6 ու. 20 կ, Սատուն սեպտ. ամս. 23 ու, Եղանդ սեպտ. ամս. 10 ու
Մամիս օգոս. ամս. 15 ու, Զորթուն հոկ. եւ նոյ. 11 ու, Կայծակ օգոս
եւ սեպտ. 10 ու 80 կ. Սիւնիս յուլ-օգ-սեպտ-հոկ 16 ու. 50 կ, Արտուա-
ւորէն 5 ու, Օղակ խ. օգոս եւ սեպտ. 15 30 կ.: Դումար 4718 ու 54 կ.

Կուսակցութեան կենտ. գանձարանում շնորհակալութեամբ
ստացել են հետևեալ գումարները—

«ՅՈՐԱՇԵՐ»-ի Հնէ. ին խմբերից	100 ու:
«ԲԵՆԻՈՐ» Մամիս-ից	100 ու.
«ՅՈՐ»-նԵՐԱՆԵՐՈՅ» Մամիս-ից	25 ու.
«ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆԻ»	100 ու.
ԱՄԵՐԻԿԱՆԻ Մ-դերի Գործ. Յանձ.	165 ու.:
«ԱՐԱՅԱԾ» Մ-դից	50 ու.
«ԸՆԿԵՐ»	70 ու.
«ՄՈՒՐԱՅ»	30 ու.
«ԲԱՆԻՈՐ»	57 ու.

Ամերիկայի և այլ շրջանակների հաշիւները կը հը-
րատարակեն յաջորդ Թերթի:

Յօդածներ, Թղթակցութիւններ, գրամ և ման-
դատ ուղարկել հետևեալ հասցեով.—

M. Bellart, 85, Peckham Rye,
(Angleterre) London, S. E.

ՏՊԱՐԱՆ «ՀԵՁԱԿ» ԼՈՆԴՈՆ